ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔՐԴԵՐԻ ՄԱՄՆԱԿՅՈՒՐԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՅԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

9(47.925)
Հ-85
Հշ.

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔՐԴԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՅԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

5235

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝
ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 854

Հովհաննիսյան Ն.
Հ 854 Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը. քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում/ Ն. Հովհաննիսյան.- Եր.: Տիգրան Մեծ, 2016.- 84 էջ:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-99941-0-709-4

© Հովհաննիսյան Ն., 2016

Այս աշխատությունն առաջին փորձն է մասնագիտորեն ուսումնասիրելու հայ-քրդական հարաբերությունների բնույթը՝ օսմանյան կառավարողների հակահայկական քաղաքականության ետնախորքի վրա:

Հեղինակի կարևոր խնդիրներից մեկն է ցույց տալ քրդերի մասնակցությունը Օսմանյան կայսրությունում երիտթուրքական դահիճների իրականացրած Հայոց ցեղասպանությանը, երբ նրանք կանգնեցին դահիճների կողքին և մինչև վերջ հավատարմորեն ծառայեցին նրանց, և բացահայտել քրդական օսմանամետ և հակահայկական դիրքորոշման քաղաքական, սոցիալ-տնտեսական և կրոնական դրդապատճառները:

Լուսաբանվում են Արևմտյան Հայաստանի տարածքների նկատմամբ քրդական հավակնությունները և քննարկվում քրդական գործոնի՝ որպես խոչընդոտի, վերաբերյալ Արևմտյան Հայաստանի հիմնախնդրի կարգավորման հայկական հայեցակարգը:

Երկու խոսք

Հրատարակելով պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի սույն աշխատությունը, Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության նպատակն է վերջապես բացել հայքրդական հարաբերությունների թղթածրարը եւ հրապարակային քննարկումների առարկա դարձնել դրանց ոչ այնքան անցյալի, որքան ներկայի ու տեսանելի ապագայի կարգավիճակն ու հարակից խնդիրները, միաժամանակ ներկայացնելով հայեցակարգային որոշ մոտեցումներ այդ հարաբերությունների հետագա կարգավորման համար:

Ցավալի է, որ քրդական թեման, ավելի շուտ՝ հայության ու Հայաստանի հետ նրա առնչակցությունների հարցը մեզ համար, թվում է, տաբու է դարձել: Հայոց ցեղասպանության գործում քրդերի պատասխանատվության, Հայկական պահանջատիրության հարցում նրանց խուսափողական կեցվածքի դիմաց հայ պատմագրությունը, քաղաքական միտքն ու մամուլը մնացել եւ մնում են մակերեսային դիրքերում: Մինչդեռ այդ եւ հարակից թեմաներին անհրաժեշտ է մոտենալ «ճակատային», ի մտի ունենալով մանավանդ, որ քրդական գլխավոր կազմակերպություններից որեւէ մեկը ցարդ պաշտոնական հայտարարությամբ ներողություն չի խնդրել Ցեղասպանությանը մասնակից լինելու համար: Ավելին՝ միլիոնավոր քրդեր այժմ ոչ միայն ապրում են բռնագաղթեցված հայերի պապենական բնակավայրերում եւ կալվածքներում, այլեւ դրանք հռչակում են իրենց հայրենիքը: Այլ խոսքով՝ թուրք ջարդարար իշխանու-

թյունների ձեռքում կամովին ազդու գործիք դառնալուց հետո քրդերն այժմ վայելում են ցեղասպանված եւ հայրենազրկված միլիոնավոր հայերի հայրենիքը, բնակավայրերը, կալվածքներն ու ստացվածքը: Իսկ դա աներկբայորեն համազոր է ցեղասպան լինելուն:

Ահա այդ «ճակատային» մոտեցման առաջին քայլն է կատարում պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանն իր այս գրքույկով, որտեղ ընդգրկված հոդվածների լրագրային տարբերակները առաջինը լույս են տեսել «Ազգ»ի 2015 թ. հոկտեմբերի 2-ի եւ նոյեմբերի 20-ի համարներում եւ արժանացել մասնագիտական շրջանակի եւ ընթերցողների բուռն հետաքրքրությանը:

ՌԱԿ Հանրապետական վարչությունը հույս ունի, որ ներկա հրատարակությունը խթան կհանդիսանա Հայաստանի եւ Սփյուռքի պատմագիտական շրջանակների եւ առհասարակ մեր հանրության համար ավելի բազմակողմանի ու խորքային անդրադառնալու այս եւ հայ-քրդական հարաբերությունների ողջ համալիր հարցերին:

ՌԱԿ Հանրապետական վարչություն

ՄՈՒՏՔ

Հայերը և քրդերը վաղնջական ժամանակներից, դարեր շարունակ, ապրել են կողք-կողքի և շփվել որպես հարևան ժողովուրդներ: Նրանք պատկանում են միևնույն աշխարհագրական արեալին՝ պատմական Առաջավոր Ասիային, այսօրվա Մերձավոր Արևելքին: Նրանց շփումները եղել են տարաբնույթ, իրենց մեջ ներառնելով ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ոլորտները:

Հայերը, դեռևս անտիկ ժամանակաշրջանից, ունեցել են իրենց անկախ պետականությունը, որը մթա առաջին դարում, շնորհիվ հայոց արքայից արքա Տիգրան Մեծի, վերածվում է կայսրության, մի հզոր պետության, որն առաջնակարգ դերակատարում է ունեցել մերձավորարևելյան ռազմավարական նշանակություն ունեցող աշխարհամասում: Հայոց կայսրության կազմի մեջ մտել են Սիրիան, Միջագետքը, Լիբանանը, Հորդանանը, Պաղեստինը, Հրեաստանը և այլ տարածքներ, ընդհուպ Եգիպտոսի սահմանները:[1] Հռոմի սենատոր, հռչակավոր հռետոր Ցիցերոնը Տիգրան Մեծին համարել է «Ասիայի ամենամեծ արքա»: Հայերը դասվում են այն սակավաթիվ ժողովուրդների շարքում, որոնք ստեղծել են իրենց ուրույն քաղաքակրթությունը:

Հայոց կայսրության կազմում, մի շարք ժողովուրդների՝ հրեաների, արաբների, ասորիների, հույների հետ միասին,

1. **Ն.Հովհաննիսյան,** Արքայից արքա Տիգրան Մեծը և Հայկական կայսրությունը արաբական արդի պատմագիտության գնահատմամբ, Երևան, 2012, նույնը՝ ռուսերեն և անգլերեն:

հայտնվում են նաև Սիրիայում, Միջագետք-Իրաքում և հարակից տարածքներում բնակվող քրդերը:

Ի տարբերություն հայերի, քրդերը պատմության ընթացքում երբեք չունեցան իրենց պետականությունը և չստեղծեցին սեփական քաղաքակրթություն: Այս երկու հանգամանքը հարկավոր է մշտապես նկատի ունենալ, երբ խոսք է լինում հայ-քրդական հարաբերությունների և դրանց բնույթի մասին: Պատմության ընթացքում քրդերն իրենց գոյությունը պահպանել են տարբեր երկրների, գլխավորապես՝ Սիրիայի, Իրաքի, Իրանի, Թուրքիայի և այլ երկրների կազմում և տարածքների վրա: Այդ պատճառով էլ քուրդ պատմաբան Ս. Գավանը իր սեփական ժողովրդին՝ քրդերին, համարում է «Մերձավոր Արևելքի բաժանված ժողովուրդ»:[2]

Երբ խոսքը վերաբերում է հայ-քրդական հարաբերություններին, հարկ է նկատի ունենալ ևս մեկ կարևոր հանգամանք: VII-X դարերում ավարտվեց քրդերի իսլամացման գործընթացը և նրանք համալրեցին մուսուլմանական ժողովուրդների շարքը: Իսկ նրանց հարևան հայերը քրիստոնյաներ էին, աշխարհում առաջին ժողովուրդը, որը դեռևս 301թ. քրիստոնեությունը պաշտոնապես հռչակել էր պետական կրոն: Չմոռանանք նշել, որ խոսքը վերաբերում է միջնադարին, երբ կրոնական զգացմունքները որպես կանոն շատ ուժեղ էին, իսկ կրոնական տարբերություններն այնքան սրված, որ դրանք հաճախ վերածվում էին սուր հակադրության:

Սակայն ոչ բոլոր քրդերն ընդունեցին իսլամ: Նրանց մի կարևոր հատված՝ եզդիները, հավատարիմ մնացին իրենց նախորդների կրոնական հավատամքին և հրաժարվեցին ընդունել իսլամը: Այդ պատճառով էլ բախումները քրդերի և եզդիների միջև բազմիցս է վկայված տարբեր պատմական աղբյուրներում: Մինչդեռ հայ-եզդիական հարաբերություններին մշտապես բնորոշ են եղել բարեկամական զգացմունքները և համագործակցության ու համերաշխության միտումները:

2. **S.Gavan, Kurdistan**. Devided Nation of the Middle East, London, 1958.

XVI և XVII դարերը ճակատագրական եղան քրդերի և հայերի համար: Բարձրացող Օսմանյան կայսրությունը 1516 թվականից սկսեց արաբական երկրների նվաճումը: Թուրքերը կարողացան բավականին կարճ ժամանակամիջոցում մեկը մյուսի հետևից նվաճել Սիրիան, Իրաքը, Լիբանանը, Հորդանանը, Պաղեստինը և Եգիպտոսը:Սիրիայի և Միջագետք-Իրաքի նվաճումը նշանակում էր, որ քրդերի հիմնական զանգվածը, ի բացառյալ Իրանի քրդերի, հայտնվեցին Օսմանյան կայսրության կազմում, օսմանյան տիրապետության տակ:

Երկարատև թուրք-պարսկական պատերազմից հետո, 1639թ., Կասր-ի-Շիրինում ստորագրվեց պայմանագիր պատերազմի ավարտման մասին, որն ավելի շուտ պայմանագիր էր Հայաստանը բաժանելու վերաբերյալ: Ըստ այդ պայմանագրի, Արևմտյան Հայաստանն անցավ Օսմանյան կայսրության տիրապետության, իսկ Արևելյան Հայաստանը մնաց շահական Պարսկաստանի տիրապետության տակ: Մեզ հետաքրքրողը հայ-քրդական հարաբերությունների տեսանկյունից այն է, որ հայերը և քրդերը երրորդ անգամ հայտնվեցին միևնույն պետության կազմում:[3] Սակայն նրանց կարգավիճակը տարբեր էր: Մուսուլման քրդերի համար Օսմանյան կայսրությունը՝ կրոնական տեսակետից, հարազատ միջավայր էր, մինչդեռ քրիստոնյա հայերի համար միանգամայն վտանգավոր երկիր, որի շրջանակներում հայերը, ինչպես մյուս բոլոր ոչ մուսուլման ժողովուրդները, ստացան իրավազուրկ ռայյայի և գյավուրի կարգավիճակ: Դա միանգամայն բարենպաստ պայմաններ ստեղծեց Արևմտյան Հայաստան քրդերի ներթափանցման և հաստատման համար, որը խրախուսվում էր օսմանյան սուլթանների կողմից: Քրդերն աստիճանաբար սկսեցին իրենց զգալ որպես տանտերեր և հեռուն գնացող քաղաքական ծրագրեր

3. Առաջին անգամ՝ Տիգրան Մեծի ստեղծած Հայոց կայսրության կայսրության (մթա, I դարի 60-ական թվ.), իսկ երկրորդ անգամ՝ Արաբական խալիֆայության կազմում (VII-XVIդդ.):

փայփայել Հայաստանի արևմտյան հատվածի նկատմամբ, դիտելով այն ամենահարմար տարածքը քրդական պետություն հաստատելու համար, գրչի մի հարվածով Հայաստանը Քրդստան կոչելով: Այդ կարգավիճակը պահպանվեց ընդհուպ 1915 թվականի Հայոց Մեծ եղեռնը, Հայոց ցեղասպանությունը, որն իրագործեցին օսմանյան իշխանությունները, օսմանյան տիրապետող քաղաքական, ռազմական և կուսակցական վերնախավը՝ քրդական վերնախավի և քրդական զանգվածների ամեակտիվ մասնակցությամբ, օժանդակությամբ և աջակցությամբ: Պատմագիտության մեջ տիրապետող է այն տեսակետը, որ պատմությունը «եթե» չի սիրում: Ընդհանուր առմամբ դա ճիշտ մոտեցում է, բայց ոչ Հայոց ցեղասպանության և նրան քրդական զանգվածների մասնակցության պարագայում: Ուստի վստահաբար կարող ենք ասել, որ եթե չլիներ քրդական վերնախավի բացահայտ աջակցությունը երիտթուրքական արյունախում դահիճներին, ապա XX դարի առաջին ցեղասպանությունը հավանաբար տեղի չէր ունենա, կամ գոնե չէր ընդունի այնպիսի ծավալներ, որի արդյունքում Արևմտյան Հայաստանը լրիվ հայաթափ եղավ:

Ցավոք, քրդերի ղեկավարության, ցեղապետների և աշիրաթների հոգևոր-կրոնական առաջնորդների մեջ չգտնվեցին այնպիսի խելացի, հեռատես քաղաքական գործիչներ, որոնք ընդունակ լինեին ըմբռնելու այն մեծ վտանգը, որ հայերի ֆիզիկական վերացումը մեծ սպառնալիք էր դառնալու նաև հենց իրենց՝ քրդերի համար: Կուրացած նախանձախառն ատելությամբ հանդեպ հայերը, չկարողանալով զսպել հայերին կողոպտելու, թալանելու և նրանց հաշվին հարստանալու իրենց անհագուրդ մոլուցքը, քոչվորակենցաղ քրդական ցեղային ավագանին կանգնեց թուրքական-օսմանյան դավադիր ոճրագործների կողքին, հուսալով, որ երիտթուրքական ոճրագործները բարձր կգնահատեն նրանց ներդրումը Հայոց ցեղասպանության գործում և սկուտեղի վրա իրենց կմատուցեն հայաթափ եղած Արևմտյան Հայաստանը:Եվ եղավ մի պահ, երբ քրդական աշիրաթական վերնախավին թվաց, թե Հայաստանի արևմտյան մասի հայաթափումը քրդերի աստեղային ժամն էր՝ Հայաստանում քրդական պետություն հաստատելու իրենց ցնորամիտ ծրագրերն իրականացնելու համար:Այդ մոլորության համար քրդերը հետագայում շատ թանկ վճարեցին: Նրանց յուրովի կամ թուրքաբար «վարձահատույց» եղավ հանրապետական Թուրքիայի հիմնադիր և առաջին նախագահ, նախկին երիտթուրքական, Հայոց ցեղասպանության իրականացման գործում «վարպետացած» և մեծ «փորձ» կուտակած Մուստաֆա Քեմալը, որը միայն 1920-ականներին երեք անգամ վայրագաբար ճնշել է քրդական ապստամբությունները, այդ թվում շեյխ Սաիդի և, այսպես կոչված, Արարատյան ապստամբությունները, տանջամահ արել, մահապատժի ենթարկել և բանտերը լցրել անհնազանդ տասնյակ հազարավոր քրդերի: Հանրապետական Թուրքիայի ղեկավարները, որոնք տոգորված էին ատելությամբ Հայոց ցեղասպանության իրականացման գործում իրենց երեկվա դաշնակիցների՝ քրդերի հանդեպ, հասան այնտեղ, որ պաշտոնապես հայտարարեցին, թե քուրդ էթնոս գոյություն չունի, որ այդ, այսպես կոչված քրդերը, «լեռնային թուրքեր են» և ոչ ավելին: Քեմալին հաջորդած թուրքական բոլոր նախագահները և կառավարությունները, ընդհուպ մերօրյա նախագահ Էրդողանը, քրդերի նկատմամբ շարունակել են նույն քաղաքականությունը: Էրդողանն էր, որ կարողացավ կազմակերպել Թուրքիայի Բանվորական կուսակցության ղեկավար Օջալանի առևանգումը աֆրիկյան երկրներից մեկում, նրան տեղափոխել Թուրքիա և դատապարտել ցմահ բանտարկության:

Ցավոք պետք է նշել, որ այսօր էլ քիչ չեն քրդական այն քաղաքական ղեկավարները, ցեղապետները, կրոնական առաջնորդները, մտավորականները և հասարակական գործիչները, որոնք դեռ փայփայում են՝ Արևմտյան Հայաստանի տարածքների նկատմամբ քրդական հնամաշ երազանքները:

Ավելի մանրամասն և առարկայականորեն այդ մասին հրա-

վիրում ենք մեր հարգաժան ընթերցողին կարդալ սույն աշխատության հետագա էջերը:[4]

***

Հարյուր տարի է մեզ բաժանում 1915թ. Հայոց ցեղասպանությունից: Դա միանգամայն բավարար ժամանակ էր, որպեսի քրդական էլիտան դասեր քաղեր հայկական հարցում իր գործած ճակատագրական սխալներից, վերանայեր իր մոտեցումները և որդեգրեր ավելի իրատեսական քաղաքականություն: Սակայն...

4. Նրանք, ովքեր ցանկանում են ավելի խորանալ քրդական հարցի մեջ , խորհուրդ ենք տալիս ծանոթանալ հետևյալ աշխատությունների հետ. **Ն. Հովհաննիսյան**, Ազգային ազատագրական պայքարը Իրաքում(1945-1963), Նույնի, Արաբական երկրների պատմություն (VII- 2007), Երևան, 2003-2007; **Ամինե Ավդալ,** Ցեղակցական հարաբերությունները քրդերի մոտ, Երևան,1965 քրդերեն; **Վ.Բայբուրդյան**, Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, Երևան, 1989: **Н. Оганесян**, Национально-освободительное движение в Ираке, Ер., 1976: **А.Поладян,** Курды в VII-X веках (по арабским источникам), Ер., 1987: **К.Курдоев**, Курды, Сб. "Народы Передней Азии", М., 1957 и т.д

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՔՈՒՐԴ ՊԱՏՄԱԲԱՆ ՔԱՄԱԼ ԱՀՄԱԴԸ ՔՈՒՐԴ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԴ ՀԱՆԳՈՒՅՑԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԷԹՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քուրդ-հայկական հարբերությունների խնդիրը մի վերին աստիճանի բարդ հանգույց է, որը պահանջում է համակողմանի քննարկում, հաշվի առնելով բոլոր հանգամանքները: Դա անհրաժեշտ է Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության բոլոր գործոնների, այդ թվում և քրդական, հաշվի առնելու և պարզաբանելու տեսանկյունից: Նամանավանդ այժմ, երբ համաշխարհային մասշտաբով նշվում է քսաներորդ դարի առաջին ցեղասպանության հարյուրամյա տարելիցը:

Այդ առումով գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում հենց իրենց՝ քրդերի, հատկապես քուրդ մտավորականության, քուրդ պատմաբանների դիրքորոշումը և նրանց տեսակետների պարզաբանումը Հայոց ցեղասպանության հարցում, նկատի ունենալով քրդական գործոնի բացասական դերակատարումը երիտթուրքերի կողմից ծրագրավորված Հայոց ցեղասպանության իրականացման մեջ: Ճիշտ է, նման քուրդ հեղինակները սակավաթիվ են, ուղղակի կարելի է նրանց մատ-

ների վրա հաշվել, բայց, այդուհանդերձ, կան նման պատմաբաններ, որոնք, հայ-քրդական հարաբերությունների և Հայոց ցեղասպանության հարցերը քննարկելիս ձգտում են մնալ գիտականության շրջանակներում և խնդիրը լուսաբանել առարկայականորեն: Դրանց մեջ առաջին հերթին ուշադրության է արժանի պրոֆեսոր Քամալ Մազհար Ահմադը և նրա հեղինակած «Քրդստանն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» հետաքրքրական աշխատությունը, որը արաբերեն լեզվով լույս է տեսել Բաղդադում դեռևս 1977 թվականին:[5] Նա երկար տարիներ եղել է Բաղդադի համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր և զուգահեռաբար զբաղվել գիտահետազոտական աշխատանքներով, հրատարակել մենագրական ուսումնասիրություններ և հոդվածներ, նվիրված քրդական հարցին և մերձավորարևելյան հիմնախնդիրներին:[6] Քամալ Ահմադը, ի տարբերություն բազմաթիվ քուրդ հեղինակների, ինչպես նաև քաղաքական, կուսակցական և հասարակական գործիչների, որոնք շրջանցում են այդ սուր հարցը, չի խուսափում ճշմարտացիորեն լուսաբանել քուրդ-հայկական հարաբերությունների բնույթը, այդ բարդ հանգույցի բոլոր բաղադրամասերը, հիմնավորում իր մոտեցումները, խստորեն դատապարտում քուրդ ֆեոդալ-շեյխերի ու ցեղապետների գործողությունները, որոնք մասնակցել են հայկական կոտորածներին, ապա նաև Հայոց ցեղասպանությանը:

Սույն հարցը քննարկելիս, մենք նախապատվությունը հասկանալի պատճառով տվել ենք Քամալ Ահմադին, նկատի ունենալով նրա էթնիկապես քուրդ լինելու հանգամանքը և հաշվի

5. **Qamal Mazhar Ahmad,** Qurdistan fi harbi al-alamiya al awal , Baghdad, 1977- Քամալ Մազհար Ահմադ, Քրդստանը Առաջին համաշխարհային պատերազմում, Բաղդադ, 1977, արաբերեն:

6. Մենք դոկտոր Քամալ Ահմադի հետ ծանոթներ ենք, աշխատանքային հանդիպումներ ունեցել, այդ թվում և Բաղդադում, հետաքրքրական զրույցներ ունեցել նրա տանը մեզ հուզող տարբեր հարցերի, և հայ-քրդական հարաբերությունների վերաբերյալ:

առնելով այն իրողությունը, որ նրա աշխատությունը, ինչքան որ պատկանում է քրդական, նույնքան էլ արաբական պատմագիտությանը, այսինքն դուրս է գալիս նեղ քրդական շրջանակներից, ձեռք բերում ավելի լայն ինչեղություն, ինչն ավելի է բարձրացնում այդ ուսումնասիրության գիտական արժեքը:

Մենք Քամալ Ասադի «Քրդստանն Առաջին համաշխարհային պատերազմում» աշխատության հայ-քրդական հարաբերություններին, Հայոց ցեղասպանությանը և քրդերի դիրքորոշմանը վերաբերող հատվածները զետեղել ենք 2004թ. մեր հայերեն լեզվով հրատարակված «Հայոց ցեղասպանությունն արաբական պատմագիտության քննական լույսի ներքո» աշխատությունում, որն այնուհետև հրատարակվել է անգլերեն (Arab Historiography on the Armenian Genocide, Yerevan, 2005), պարսկերեն (Թեհրան, 2009), և երկու անգամ արաբերեն, առաջին անգամ Կահիրեում՝ 2011թ., իսկ վերջերս էլ՝ 2015թ. Հալեբում: Դրա շնորհիվ քուրդ պատմաբանի տեսակետները, որի մասին կխոսվի ստորև, հայտնի դարձան տարբեր երկրների և ազգությունների մասնագետներին և ընթերցող հասարակության ամենալայն շրջանակներին:

Քամալ Ահմադի վերոնշյալ ուսումնասիրությունը պարունակում է առանձին ենթաբաժիններ, նվիրված քրդերի մասնակցությանը օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II 1894-1896թթ. կազմակերպած հայկական կոտորածներին և 1915թ. Հայոց ցեղասպանությանը:

Նա քրդական գործոնը, նրա ազդեցությունը բաժանում է երկու կատեգորիայի՝ քրդերին և հայերին բաժանող և նրանց մերձեցնող գործոնների, հանգամանորեն քննարկելով դրանցից յուրաքանչյուրը:

Քրդերին և հայերին բաժանող գործոններից քուրդ պատմաբանն առաջին հերթին նշում է կրոնական գործոնը: «Կրոնը,- գրում է նա,- այն գործոններից մեկն էր, որը բաժանում էր նրանց»:[7] Նա այն կարծիքն է հայտնում, որ կրոնական գործոնն

7. Քամալ Ահմադ, Քրդստանը Առաջին համաշխարհային պատերազմում, էջ 237:

իրեն չէր դրսևորել, քանի դեռ չէր դրսևորվել մեկ այլ գործոն, որը, ինչպես նշում է նա, դարձավ քուրդ-հայկական հակասությունների իսկական պատճառը: «Այստեղ կար ուրիշ գործոն,-գրում է Քամալ Ահմադը,- որը երկու ժողովուրդներին բաժանում էր միմյանցից՝ հայերը համեմատած քրդերի հետ ավելի զարգացած էին»:[8] Բարձր գնահատական տալով հայերի ստեղծած քաղաքակրթությանը, քուրդ պատմաբանն ընդգծում է, որ «բազմաթիվ պատճառների հետևանքով Հայաստանը Քրդստանից շատ ավելի վաղ ներգրավվեց կապիտալիստական շուկայի մեջ և այդ պատճառով նոր հարաբերությունները հայկական հասարակության մեջ առաջացան ավելի վաղ, քան քրդականում»:[9] Ի հավելումն, նա նշում է ևս մեկ այլ գործոն՝ արհեստագործական-տնայնագործական արտադրությունը և առևտուրը Քրդստանում գտնվում էր հայերի ձեռքում, որոնց դիմում էին քրդերն անհրաժեշտության դեպքում: Հայերը դառնում են դրամական վարկերի և փոխատվությունների գլխավոր աղբյուրը, իսկ քրդական արհեստագործական արտադրությունը չէր կարող մրցել հայերի հետ: Եվ այդ կապակցությամբ, Քամալ Ահմադն ընդգծում է, որ քուրդ ֆեոդալները բռնություններ էին կիրառում և հալածում հայ առևտրականներին, որպեսզի նրանց ետ չվերադարձնեն նրանցից վերցրած պարտքը: Քամալ Ահմադի կածիքով, «Դրա հետևանքով, տարբեր ժամանակներում, հայ ժողովրդի արդարացի ազատագրական շարժումը պատճառ հանդիսացավ, որ քրդերի մոտ որոշ վախ առաջանա նրա (հայերի ազատագրական շարժման-Ն.Հ.) ապագա հետևանքների հանդեպ»:[10]

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք,ապա քրդերին և հայերին բաժանող գործոնը, ըստ քուրդ պատմաբանի, բաղկացած էր երեք տարրերից՝ ա/ կրոնական,[11] բ/զարգացման բարձր

8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. Նույն տեղում, էջ 238-239:
11. Քրդերի իսլամացման մասին տես՝ **A. Poladian**, The Islamization of the Kurds(7th-10th Centuries AD), Acta Kurdica, Curzon Press, London, Vol.I, 1994,p. 21-26.

(հայեր) և ցածր (քրդեր) մակարդակներ և գ/ հակասություններ քրդական ֆեոդալական ավագանու և երիտասարդ հայկական բուրժուազիայի միջև:

Այնուհետև Քամալ Ահմադը լուսաբանում է քրդերին և հայերին մերձեցնող գործոնները:Այդ առթիվ Քամալ Ահմադն առաջին հերթին մատնանշում է այն պատմական իրողությունը, որ երկու ժողովուրդները դարեր շարունակ ենթարկվել են ճնշումների՝ սեֆյան իրանական շահերի և օսմանյան թուրքական սուլթանների տիրապետության տակ, և ընդգծում, որ «կասկած չկա, որ այդ իրավիճակը միավորում էր հայերի և քրդերի զգացմունքները»:[12] Քուրդ պատմաբանը որպես մերձեցնող գործոն է համարում նաև այն պարագան, որ և՛ հայ և՛ քուրդ գյուղացին հարկ էին մուծում միևնույն օսմանական գանձարանը, ինչն ամեն օր դառնում էր ավելի ու ավելի ծանր:[13] Բայց հենց այստեղ էլ նա արդարացիորեն ավելացնում է, որ օսմանյան սուլթանների թողտվությամբ, հատկապես սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման շրջանում, քուրդ ֆեոդալները սաստիկ ճնշում էին հայ գյուղացիներին, հայկական գյուղերը պահում իրենց վերահսկողության տակ և ամեն տեսակի ճնշումներ գործադրում: Նա խոսում է այն ծանր հարկերի, այդ թվում և «անհավատների վրա հարկերի» մասին, որ քուրդ ֆեոդալները և աղաները գանձում էին գյավուր հայերից, նրանց դաժանությունների և կամայականությունների մասին:[14] Այդ կապակցությամբ Քամալ Ահմադը կատարում է երկու կարևոր դիտարկում:

Առաջին, Օսմանյան կայսրությունում «գոյություն ունեցող պայմանները մեծապես նպաստում էին քրդական ֆեոդալների վերոնշյալ գործողություններին, իսկ սուլթան Աբդուլ Համիդը ոչ միայն հրահրում էր նրանց, այլև ցույց տալիս ֆինանսական

12. Քամալ Ահմադ, Քրդստանը Առաջին համաշխարհային պատերազմում, էջ 239:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում, էջ 242:

5235

և իրավական օգնություն, որպեսզի նրանք (քրդերը-Ն.Հ) գրավեին հայերի հողերը»:[15]

Երկրորդ, կրոնական տարբերությունը և հայերին անհավատներ՝ «գյավուրներ» համարելու հանգամանքը, քրդական ֆեոդալների, աղաների տեսանկյունից թույլատրելի էր դարձնում բռնությունների կիրառումը հայերի նկատմամբ:[16] Քամալ Ահմադը կիսում է ռուս ականավոր թուրքագետ Վ. Գորդլևսկու տեսակետը, որ թուրքերը քրդերին հրահրում էին ընդդեմ հայերի քանի որ «թշնամությունը հայերի և քրդերի միջև հօգուտ նրանց շահերի էր, որովհետև թուրքական կառավարությունը վարում էր «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը»:

Այդ բոլորից հետո Քամալ Ահմադը եզրակացնում է, որ «հայկական ջարդերի մեջ քրդերի դերն ուսումնասիրելու համար հարկ է նկատի ունենալ այդ բոլոր գործոնները, այդ բոլոր պատճառները միասին վերցրած»,[17] որի հետ դժվար է չհամաձայնվել:

Անդրադառնալով քրդերի մասնակցությանը 1915թ. Հայոց ցեղասպանությանը, Քամալ Ահմադն առանց դույզն իսկ տատանվելու հաստատում է. «Մեծ ցավով պետք է նշել, որ քրդերն այս կամ այն աստիճանի, գիտակցաբար, թե անգիտակցաբար, ուրիշների կողմից հրահրված, թե կանխամտածված, մասնակցել են այդ սպանդին»:[18] Կատարելով այդ կարևոր եզրակացությունը, նա արդարացիորեն բողոքում է ընդդեմ այն բանի, որ թուրք գործիչները ջանում են հայկական ջարդերի համար ամբողջ պատասխանատվությունը գցել քրդերի վրա և դա կապել քրդերի հետամնացության և ֆանատիզմի հետ, թեև նա էլ չի ժխտում, որ քրդերը հետամնաց էին և ինչ-որ տեղ և ինչ-որ չափով նաև մոլեռանդ են եղել: Նա ուղղակի գրում է. «Հենց սկզբից պետք է խոստովանել, որ կրոնական կույր մոլեռանդությունը և կուլտուրական հետամնացությունն այն երկու գլխավոր պատճառներն էին, որոնք քրդերի մեծամասնությանը մղում էին գյավուրների (իմա՝ հայերի-Ն.Հ.) սպանությանը»:[18]

Քամալ Ահմադը վերլուծական մեթոդի հետևողական կողմնակից պատմաբան է: Ջարդերի առթիվ նա կատարում է շատ ուշագրավիչ և տրամաբանական դիտողություն, որի նմանը միշտ չէ, որ հանդիպում է պատմագիտության մեջ: «Քրդերն ու թուրքերը և տարածաշրջանի մյուս ժողովուրդների զավակները,- ընդունում է նա,- ավելի հետամնաց էին ու ավելի կապված իսլամին նախքան մի այնպիսի նորության հանդես գալը, ինչպես ջարդերը, և, այդուհանդերձ, հարյուրավոր տարիների ընթացքում հայերի և քրդերի միջև, քրդերի և ասորիների միջև չեն եղել արյունալի դրամաներ»:[20]

Այդ դեպքում, ո՞րն է դրա պատճառը, որը հետագայում ամեն ինչ տակնուվրա եղավ:

Քամալ Ահմադը, որը չի սիրում խուսափել սուր հարցերի քննարկումից, այս անգամ ևս հավատարիմ է մնում այդ գիտական մեթոդին, և տալիս է իր իսկ կողմից առաջ քաշված սուր հարցի պատասխանը: Անդրադառնալով այդ հարցին նա նկատում է, որ տարիների ընթացքում հանդես էին եկել նոր, կամ, ինչպես ինքն է բնութագրում, «հրահրիչ գործոններ», որոնք վարպետորեն քողարկվում էին «հայերի նկատմամբ քրդերի կույր կրոնական մոլեռանդության» շղարշով: Դրանում նա առաջին հերթին մեղադրում է թուրքական կառավարությանը: Նա նշում է, որ օսմանյան ղեկավարները կեղծ լուրեր էին տարածում հայերի անկախության մասին և դրանով «քրդերի մեջ վախ էին հրահրում և փչացնում հայ-քրդական հարաբերությունները: Դա ի նպաստ պետության (օսմանյան-Ն.Հ.) էր»:[21] Նա շեշտում է, որ թուրքական կառավարությունն ամեն ինչ անում էր մի կողմից հայերի և քրդերի միջև հակասությունները բորբոքելու համար, իսկ մյուս կողմից՝ պատնեշ կանգնեցնելու բոլոր այն ուժերի առջև, որոնք կփորձեին նպաս-

15. Նույն տեղում:
16. Նույն տեղում:
17. Նույն տեղում, էջ 243:
18. Նույն տեղում, էջ 257:

19. Նույն տեղում, էջ 259:
20. Նույն տեղում, էջ 260:
21. Նույն տեղում, էջ 274:

տել հայերի և քրդերի մերձեցմանը: Դրանով քուրդ պատմաբանը քրդերի պատասխանատվության հարցը չի վերացնում և չի ձգտում որևէ կերպ արդարացնել քրդերի մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը: Նա, ընդհակառակը, մեղադրում է նրանց: Մենք արդեն վկայակոչել ենք նրա տեսակետն այդ հարցում և մատնանշել, որ նա մեղադրում է քրդերին այդ սպանդին մասնակցելու համար: Սակայն գտնում ենք, որ արժե բերել նրա ևս մեկ այլ դիտարկումը: Քամալ Ահմադը գտնում է, որ «Քրդերի մեծամասնությունը, որ մասնակցել է հայերի ոչնչացմանը, համաիդիե հեծելազորից էր: Այդ ռազմական կազմակերպությունը ստեղծվել էր նման գործեր կատարելու համար և այն վստահվել էր քրդերին»:[22]

Հայերի ցեղասպանությանը քրդերի մասնակցության մյուս դրդապատճառը Քամալ Ահմադը համարում է քրդական ցեղերի ավագանու ագահությունը և ընչաքաղցությունը, որը ձգտում էր հարստանալ հայերի հաշվին: Նա նշում է, որ համիդիեի զորքերը և քուրդ որոշ ֆեոդալներ, աղաներ, ցեղապետներ, շեյխեր գտնում էին, որ հայերի սպանությունը ամենահարմար հնարավորությունն էր իրենց ձեռքը գցելու հայերին պատկանող հողատարածքները, արոտավայրերը, անասունները, գույքն ու ունեցվածքը և այդ պատճառով էլ մասնակցում էին հայերի ցեղասպանությանը: Քամալ Ահմադի այս վկայությունը, անշուշտ, օգնում է ճիշտ հասկանալու, թե ինչու էին քրդերը դեմ հայերի անկախությանը և դրա մոտիվացիան: Քրդական ավագանին, ֆեոդալները, շեյխերը, ցեղասպետները վախենում էին, որ Հայաստանի անկախության դեպքում իրենք կզրկվեն հայերին կողոպտելու ու թալանելու, հայերի հաշվին հարստանալու և նրանց հողերին տիրանալու հնարավորությունից:

Եվ, վերջապես, Քամալ Ահմադը գտնում է, որ շատ քրդեր, քրդական զանգվածն ամբողջությամբ, «հայերի սպանությունը դիտում էին որպես սրբազան պատերազմ՝ ջիհադ, հանուն Ալլահի»:[23] Այդ բոլորի հետ միասին քուրդ պատմաբանի աշխատության մեջ բերված են օրինակները հայ-քրդական բարեկամության պատմությունից, այդ թվում և 1915թ. հայոց ցեղասպանության ժամանակ, երբ որոշ քրդեր, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, հաճախ փորձել են փրկել կամ օգնել հայ բռնագաղթվածներին:

Ահա այսպիսին է ընդհանուր գծերով քուրդ պատմաբան Քամալ Ահմադի հայեցակարգային մոտեցումը հայ-քրդական հարաբերությունների խնդրին և հայերի ջարդերին ու ցեղասպանությանը քրդերի մասնակցության կնճռոտ հարցին:

Նրա հայեցակարգում անհրաժեշտ է առանձնացնել չորս սկզբունքային մոտեցում:

Առաջին, քրդական հասարակության ներսում կային որոշակի ազդեցիկ և տիրապետող սոցիալական խավեր և ուժեր՝ ցեղային ավագանին, կալվածատերերը, ցեղապետները, աշիրաթների և ցեղային զանազան խմբավորումների առաջնորդները, աղաները, զինվորականները, օսմանյան պետության շահերը սպասարկող պաշտոնյաները, հոգևորական առաջնորդները և այլն, բաժանում էին արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II-ի «Հայկական հարցը հայերին ոչնչացնելու ուղիով լուծելու» տեսակետը և գործուն մասնակցություն ունեցան այդ քաղաքականության իրագործման մեջ, նրանում ներգրավելով նաև քրդական անասնապահ-քոչվորական զանգվածներին և հողագործներին:

Երկրորդ, ըստ Քամալ Ահմադի, հայ- քրդական հարաբերություններում առկա հակասություններն արդյունք էին յուրահատուկ իրողությունների, առաջին հերթին զարգացման տարբեր մակարդակների՝ զարգացման բարձր մակարդակի վրա գտնվող և կապիտալիստական հարաբերությունների ոլորտը ոտք դրած հայերի և զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող և դեռևս ֆեոդալական-ցեղային հարաբերությունների թավուտներում խարխափող քրդերի:

Երրորդ, հաշվից չպետք է դուրս նետել նրանց պատկանելությունը տարբեր կրոնների: Մի կողմում քրիստոնյա հայերը,

22. Նույն տեղում, էջ 262:
23. Նույն տեղում, էջ 261:

իսկ մյուս կողմում իսլամ դավանող և իրենց ֆանատիզմով հայտնի քրդերը, որոնց կրոնն ընդունում և խրախուսում է ջիհադը՝ քրիստոնյաների դեմ ուղղված սրբազան պատերազմը:

Չորրորդ, Օսմանյան կառավարությունը և վերնախավը, խաղալով քրդական վերնախավի ընչաքաղցության, ագահության, հայերին կողոպտելու և թալանելու, նրանց հաշվին հարստանալու զգացմունքների վրա և նրանց վախեցնելով հայկական անկախ պետության ստեղծման հեռանկարով, որը կարող էր առաջանալ միայն այն տարածքներում, որոնք գտնվում էին քրդերի տիրապետության տակ, քրդերին դարձրեց իր ձեռքին հլու հնազանդ գործիք՝ Հայոց ցեղասպանության իրականացման ճանապարհին:

Կարծում ենք, որ քուրդ պատմաբան Քամալ Ահմադի ուսումնասիրությունը և նրանում տեղ գտած հեղինակի մոտեցումներն ու հիմնադրույթները կօգնեն ճիշտ ըմբռնելու հայ-քրդական հարաբերությունների բնույթը, քրդական վերնախավի հակահայկական նկրտումները, որը կօգնի ամբողջական և ճշգրիտ պատկերացում կազմել արդի քրդական գիտական և քաղաքագիտական մտքի միտումների վերաբերյալ, ինչն ուղղակի հակասում է հայոց ազգային-քաղաքական կենսական շահերին և հայոց անմեռ ձգտումներին:

Միաժամանակ գտնում ենք, որ դա կօգնի ճիշտ մեկնաբանելու քրդերի, որպես ժողովրդի կատարած պատմական խոշոր սխալի՝ օսմանյան դահիճների կողմն անցնելու, նրանց ձեռքին գործիք դառնալու, Հայոց ցեղասպանությանն ակտիվ մասնակցելու քաղաքական, տնտեսական և էթնո-մշակութային դրդապատճառները: Այդ սխալը հետագայում շատ թանկ նստեց նաև քուրդ ժողովրդի և նրա քաղաքական ճակատագրի վրա, երբ Հանրապետական Թուրքիայի ղեկավարությունը՝ զինվորականությունը և քեմալականները մեկ անգամ չէ, որ արյան մեջ խեղդել են քրդական ընդվզումները: Դա պատմության ամենամեծ ծաղրն էր, երբ օսմանյան դահիճների դաշնակից քուրդը դարձավ այդ նույն դաշնակից դահճի զոհը:

***

Հարյուր տարի է մեզ բաժանում 1915 թ. Հայոց ցեղասպանությունից: Դա միանգամայն բավարար ժամանակ էր, որպեսի քրդական քաղաքական էլիտան անհրաժեշտ դասեր քաղեր հայկական հարցում իր գործած ճակատագրական սխալներից, վերանայեր իր մոտեցումները և որդեգրեր ավելի իրատեսական քաղաքականություն: Այժմ քրդերը կրկին հայտնվել են հակամարտության մեջ թուրքական իշխանությունների հետ, զինված բախումներ են լինում քրդերի և թուրքերի միջև ոչ միայն Ստամբուլում, այլև Արևմտյան Հայաստանի մարզերում՝ Խարբերդում, Վանում, Դիարբեքիրում և այլ շրջաններում, որոնք հիմնականում բնակեցված են քրդերով: Արդեն բացահայտ խոսվում է թուրքական պետության տրոհման, նոր պետությունների, այդ թվում և քրդական, կազմավորման հնարավորության մասին: Սակայն քրդական ղեկավարները, կուսակցությունները, այդ թվում և Քրդական բանվորական կուսակցությունը և նրա ղեկավար Օջալանը, ինչպես նաև այլ կառույցներ, չեն ճշգրտում, թե որտեղ և ինչ տարածքներում է այդ քրդական պետությունը ստեղծվելու: Մեր զրույցներից մեկի ժամանակ Քրդական բանվորական կուսակցության քաղբյուրոյի անդամներից մեկը, որը համակարգում էր ՔԲԿ-ի աշխատանքները ԱՊՀ-ի տարածքներում և հատկապես նրա Հարավային շրջաններում, մեր այն հարցին, թե դուք և ձեր կուսակցությունը ինչպե՞ս եք պատկերացնում քրդական պետության ստեղծումը, ո՞րտեղ և ո՞ր տարածքում է նա կազմավորվելու, նա, կռահելով իմ հարցի ենթատեքստը, պատասխանեց՝ «Մեր առաջնորդ Աբդուլլահ Օջալանը գտնում է, որ հայերն ու քրդերը եղբայր ժողովուրդներ են և երբ գա պետություն ստեղծելու պահը, ապա ամեն ինչ պարզ կդառնա»: Փաստորեն նա խուսափեց իմ հստակ հարցին հստակ և ուղիղ պատասխան տալուց: Եվ նա միակը չէ, որ այդպես է վարվում: Քրդական շատ ղեկավար գործիչներ չեն թաքցնում, որ քրդական պետությունը

Թուրքիայում կստեղծվի այն տարածքում, որն այժմ գտնվում է նրանց վերահսկողության տակ, այսինքն Արևմտյան Հայաստանում: Նրանց շարքերում կան այնպիսի գործիչներ, որոնք բացեիբաց հայտարարում են, որ նրանք այժմ մարտնչում են թուրքերի դեմ, արյուն են թափում, իսկ հայերը դրանում ոչ մի մասնակցություն չեն ցուցաբերում: Նրանց տրամաբանության առանցքն այն տեսակետն է, որ հողը, այսինքն տարածքը, պատկանում է նրան, ով արյուն է թափում նրա համար: Թուրքական այդ ղեկավարները նման են ֆրանսիական Բուրբոններին, որոնք, ինչպես նշել է ֆրանսիական դիվանագիտության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ Շարլ Թալեյրանը, «Նրանք ոչինչ չեն մոռացել և ոչինչ չեն սովորել»: Մի բան պարզ է. անկախ այն հանգամանքից, թե երբ կստեղծվի քրդական պետությունը, քրդերը չպետք է թույլ տան երկրորդ ճակատագրական սխալը և հակադրվեն հայերին: Արևմտյան Հայաստանը միշտ էլ տեր է ունեցել և այժմ էլ ունի: Եվ դա հայն է:

Իմ լուսահոգի մայրը, որը Էրզրումցի էր, ցեղասպանության ժամանակ կորցրել էր մորը և այլ հարազատների, հրաշքով փրկվել և զանազան քարավանների հետ ի վերջո հասել էր Ալեքսանդրապոլ և հայտնվել ամերիկյան որբանոցում, հետագայում միշտ ասում և հիշեցնում էր ինձ. «Տղա ջան, հիմա էլ, որ գնամ Էրզրում, կգտնեմ մեր հայրական տունը և մեր տան բանալին: Ախ երանի այդ օրվան»: Եվ նա միակը չէր, որ այդպես էր կարծում և այդպես հավատացած էր:

Հայերը գիտեն իրենց տան բանալիի տեղը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԴԻ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՋ ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քրդական գործոնը տիպաբանորեն պատկանում է Հայոց ցեղասպանության իրագործման համակարգին: Սակայն նա ոչ թե նախապատճառ է, այլ ածանցյալ, որը կապված է օսմանյան կառավարողների քաղաքականության հետ: Որդեգրելով հայերին կոտորելու, ապա նաև ցեղասպանության քաղաքականությունը, օսմանյան սուլթանները քրդերին օգտագործեցին որպես գործիք իրենց ձեռքում հայերի նկատմամբ իրենց դիվային ծրագրերն իրագործելու ճանապարհին: Առաջնայինը տվյալ դեպքում օսմանյան պետության, սուլթանների ու երիտթուրքերի հայեցակարգային մոտեցումն էր՝ Հայկական հարցը հայերին վերացնելու ուղիով լուծելը, որի շրջանակներում ներդաշնակորեն տեղավորվում է քրդական գործոնը: Առաջնայինը համարելով օսմանյան կառավարողների հակահայկական քաղաքականությունը, իսկ քրդերի հակահայկական գործունեությունը և մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը դիտելով դրանից բխող կամ արտաբերվող, դա չի նշանակում որևէ կերպ նվազեցնել քրդերի պատմական պատասխանատվությունը: Նրանք ունեն մեղքի իրենց բաժինը: Վերջին հաշվով քր-

դերը չեն ընդվզել թուրքական հակահայկական քաղաքականության դեմ, կամ չեզոք մնացել, այլ մասնակցել են հայերի ֆիզիկական վերացման թուրքական քաղաքականության իրականացմանը, քանի որ դա համապատասխանում էր նրանց քաղաքական նկրտումներին, քաղաքական և տնտեսական շահերին և, ըստ էության, վերածվեց նաև քրդական քաղաքականության: Սա է գաղտնիքը, և գիտությունը չի կարող լռել այդ մասին: Այս յուրահատկությունը շատ լավ է նկատված արաբական արդի պատմագիտության մեջ: Ուստի և արաբ պատմաբանները բավականին մեծ տեղ են հատկացրել քրդերի հակահայկական գործունեությանը, հայկական կոտորածներին նրանց մասնակցությանը, ապա նաև 1915թ. Հայոց ցեղասպանության մեջ քրդական գործոնի լուսաբանությանը:

Արաբական արդի պատմագիտությունը Հայոց ցեղասպանության հիմնահարցերի խորքային ուսումնասիրության, ընգրկված խնդիրների բազմաշերտ ծալքերի բացահայտման, եզակի նյութերի և փաստաթղթերի գիտական շրջանառության մեջ դնելու և մեկնաբանությունների ու գնահատականների վստահության բարձր աստիճանի առումով, յուրօրինակ տեղ է գրավում ցեղասպանագիտության համակարգում, իսկ որոշ դեպքերում ուղղակի անմրցելի է:

Արաբ պատմաբանները, մասնավորապես Մուսա Պրենսը[24], Ուսման ալ-Թուրքը[25], Ֆուադ Հասան Հաֆիզը[26] և մյուս հեղինակներն ընդգծում են, որ սուլթան Համիդ II-ն իր հակահայկական քաղաքականությունն իրագործելիս մեծապես օգտագործում էր քրդերին և չերքեզներին:

Իսկ ինչո՞վ է դա բացատրվում:

24.**Moussa Prince.** Avec la collaboration de Marie -Ange M. Prince,Un genocide impuni, L'Armenocide . Introduction, Lebanon, 1967:

25. **Usman al-Turq,** Safahat min Tarikhi al-Umma al Armaniya- Ուսման ալ-Թուրք, Էջեր հայ ազգի պատմությունից, Հալեբ, 1960, արաբերեն:

26. **Fuad Hasan Hafiz,** Tarikh al-Shaabi al-Armani munzu al-Badayati Hatta al-Yaum- **Ֆուադ Հասան Հաֆիզ,** Հայ ժողովրդի պատմություն. սկզբից մինչև մեր օրերը, Կահիրե, 1986, արաբերեն:

Արաբական երկրներն ավելի քան չորս դար՝ 1516-1918թթ., Օսմանյան կայսրության մասն են կազմել: Սակայն դա եղել է ոչ թե կամավոր միացում, այլ ինչպես արդեն նշել ենք, նվաճման արդյունք: Օսմանյան-թուրքական չորսդարյա բռնատիրական լուծը, ինչպես նշում են արաբ հետազոտողները, աղետաբեր եղավ արաբների համար: Արաբները Օսմանյան կայսրությունը գիտեն ոչ թե հեռվից կամ գրականությունից, այլ ներսից, որպես օսմանյան սուլթանների հպատակներ, օսմանյան դաժանության, վայրագության և սարսափների կրողներ: Պատահական չէ, որ հենց արաբները սուլթան Աբդուլ Համիդ II-ի դարաշրջանը՝ 1876-1909 թվականները, անվանեցին «Զուլումի դարաշրջան»: «Զուլում» եզրը արաբերեն բառ է, որը նշանակում է «բռնակալություն», «դիկտատուրա», «միահեծանություն» և այդ իմաստով էլ ընկալվեց աշխարհում: Սակայն նա ունի նաև ողբերգության, աղետի և դժբախտության երանգավորում, և հայերը հենց այդպես են ընկալում և այդ իմաստով են գործածում «զուլում» բառը:

Կարծում ենք, որ քրդական գործոնի դերակատարումը հայկական կոտորածների հարցում պետք է դիտարկել համիդյան զուլումի համատեքստում, մասնավորապես, 1891թ. ստեղծված «Ֆուրսան ալ-համիդիեի»՝ «Համիդիեի հեծելազորի» վայրագ գործողությունները նկատի ունենալով Արևմտյան Հայաստանի տարբեր հայաբնակ վայրերում:

Այդ բանդիտա-ավազակային զորախումբը, ինչպես նշում են արաբ մասնագետները, ստեղծվել էր սուլթան Աբդուլ Համիդի հրամանով բացառապես քրդերից և նրա գլխավոր խնդիրը հայերին բռնության և սարսափի մեջ պահելն ու հայկական ջարդերը կազմակերպելն էր:[27] Համիդիե հեծելազորի առանձնահատկությունը, ինչպես հաստատում է Ուսման ալ-Թուրքը, նրանում էր, որ նա չէր մտնում օսմանյան բանակի կազմում, այլ ինքնուրույն միավոր էր, որը գտնվում էր Աբդուլ Համիդի

27. **Ֆուադ Հասան Հաֆիզ,** Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Կահիրե, 1986, արաբերեն :

անմիջական հրամանատարության տակ: Նրա զորակայանը տեղակայված էր հայկական Երզնկա քաղաքում, և արաբ պատմաբանների հավաստիացմամբ, հիմնականում համալրվում էր Դիարբեքիրի քրդերից: Ֆուաադ Հասան Հաֆիզը, Մրվան ալ-Մուդավարը, Սամիր Արբաշը, Սալիհ Զահիր ալ-Դինը միակարծիք են այն հարցում, որ 1884-1896թթ. Աբդուլ Համիդի նախաձեռնած հայկական կոտորածներն իրականացվել են հիմնականում համիդիեի կողմից: Նրանք նաև առանձնացնում են քուրդ ցեղապետ Մուսա բեկին և նրան ենթակա քրդերի գործողությունները, որոնք աչքի էին ընկնում իրենց դաժանությամբ ու անմարդկայնությամբ, քրդական ավազակախմբերի գործողությունները Բիթլիսի վիլայեթում, հատկապես Մուշում, Սասունում, ինչպես նաև հայկական մյուս վիլայեթներում: Քրդական զինյալ ջոկատների 1894-1896թթ. զազրելի գործողությունների մասին լիբանանյան հանրագիտարանում հետևյալն է նշված. «Տասնյակ հազարավոր քուրդ քոչվորներ մտան հայկական տարածքներ՝ Մուշ, Վան, Էրզրում և կազմավորեցին զինված ջոկատներ հայտնի համիդի» անվանումով, որոնք կառավարության թողտվությամբ ավերեցին Հայաստանը»:[28] Մուսա Պրենսը 1890-ականների հայկական կոտորածները, մանավանդ Սասունում, չի պատկերացնում առանց Համիդիեի մասնակցության, դրանք համարելով քրդական հեծելազորի արյունոտ գործը:[29]

Ինչպես նշվել է առաջաբանում, երկարատև պատերազմներից հետո, շահական Պարսկաստանը և օսմանյան Թուրքիան 1639թ., Կասր- ի- Շիրինում,ստորագրեցին պայմանագիր, որով Հայաստանը բաժանվեց նրանց միջև: Արևելյան Հայաստանը մնաց Պարսկաստանի կազմում, իսկ Արևմտյան Հայաստանն անցավ օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Հայաստանի արևմտյան հատվածն անցավ Ալթայից և Միջին Ասիայից Փոքր Ասիա ներխուժած մի նոր էթնոսի՝ քոչվորական

28. Dairat al-Maarif, X, Beirut, 1973- Էնցիկլոպեդիա, h. X, Բեյրութ, էջ 309:
29. **Mussa Prince,** L'Armenocide, p. 28-29:

անասնապահ օղուզ թուրքերի տիրապետության տակ, և տարածաշրջանի բնիկ տերերը՝ հայությունը, հայտնվեց մի այնպիսի անկառավարելի էթնոսի հարևանությամբ, ինչպիսին քրդերն էին, որոնք իրենց հետամնացությամբ ու ընչաքաղցությամբ ոչնչով չէին զիջում իրենց տերերին՝ թուրքերին: Եվ սկսվեց Արևմտյան Հայաստանի վարչատարածքային մարզերի անընդմեջ վերաձևումը՝ նպատակակետ ունենալով նպաստել թուրքական և քրդական էթնոսի թվական գերակայությանը՝ ի հաշիվ հայերի թվաքանակի նվազեցման իր բնօրրանում: Արևմտյան Հայաստանը վերոնշյալ պայմանագրից հետո բաժանվեց յոթ փաշայությունների՝ Էրզրումի, Սեբաստիայի, Վանի, Դիարբեքիրի, Բայազետի, Չալդրանի և Կարսի: XIX դարում փաշայությունների փոխարեն կազմավորվեցին վիլայեթներ՝ նահանգներ, և Հայաստանը բաժանվեց հինգ վիլայեթի՝ Էրզրումի, Խարբերդի, Սվազի, Տրապիզոնի և Դիարբեքիրի: Բնիկ հայերով բնակեցված Վանի, Բայազետի, Չալդրանի և Կարսի նահանգները վերացվեցին: Սուլթան Աբդուլ Համիդը, հետապնդելով հայկական նահանգները տրոհելու նպատակներ և խրախուսելով նրանցում մուսուլման բնակչության թվաքանակի աճը, 1879-1880 թվականներին հիմնեց Բիթլիսի նահանգը՝ Վանի և Դիարբեքիրի նահանգներից անջատելով համապատասխան տարածքներ: Իսկ 1880-ականներին սուլթանը ամենամեծ հայկական վիլայեթը՝ Էրզրումի վիլայեթը, տրոհեց չորս վիլայեթների՝ Էրզրումի, Վանի, Մուշի և Հաքքարիի: Շատ չանցած, Մուշի վիլայեթն իր գերակա հայկական բնակչությամբ դադարեց գոյություն ունենալուց: Դրա փոխարեն ստեղծվեց մի նոր վիլայեթ՝ Դերսիմի վիլայեթը, որտեղ բնակչության մեծամասնությունը կազմում էին քրդերը և թուրքերը: Արևմտյան Հայաստանի տարածքային-վարչական մի նոր վերաբաժանում տեղի ունեցավ 1897թ., երբ սուլթանը Արևմտյան Հայաստանը բաժանեց հետևյալ վիլայեթների՝ Էրզրումի, Խարբերդի, Սվազի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Տրապիզոնի, երբ արդեն նա հասել էր իր նպատակին հայկական նահանգներում բնիկների՝ հայե-

րի թվաքանակի նվազեցմանը և մուսուլմանների՝ թուրքերի, քրդերի և չերքեզների թվաքանակի մեծացմանը:[30]

Արաբ պատմաբանները նկատել են, որ թուրքերի, քրդերի և չերքեզների բնակեցումը հայկական շրջաններում և տեղաբնիկ հայերի պապենական հողերի բռնագրավումը հարցի մի կողմն էր: Հարցի մյուս կողմն այն էր, որ օսմանյան իշխանություններն անընդհատ բախումներ և ընդհարումներ էին հրահրում եկվոր մահմեդականների՝ թուրքերի, քրդերի և չերքեզների, ու տեղաբնիկ հայերի միջև, քրդերի և չերքեզների ձեռքով իրականացնելով հայկական ջարդեր, պաշտպանելով մահմեդականներին ընդդեմ հայերի:

Կարելի է վստահաբար ասել. որ առանց 1639թ. և դրանից հետո իրականացված թուրք-քրդական հակահայկական քաղաքականության, չէր լինի 1915թ.:

Հայտնվելով հետամնաց, բարբարոսական սկզբունքների վրա խարսխված Օսմանյան կայսրության կազմում, հայերը դարձան դեռևս 1516թ. նվաճված արաբների հարևաններն ու բախտակիցները: Մենք ժամանակին այն տեսակետն ենք արտահայտել, որ արաբները և հայերը, հայտնվելով միևնույն Օսմանական կայսրության տիրույթում և տիրապետության տակ, դարձան բախտակից ժողովուրդներ, նրանց հակառակորդը միևնույն օսմանյան դաժան լուծն էր, նրանց խնդիրները նույնն էին՝ պայքար օսմանյան բռնատիրության դեմ, ազգային ինքնության պահպանում և տարրական իրավունքների պաշտպանություն: Մեր այս տեսակետն ընդունվել է արդի արաբագիտության կողմից: Այդ կապակցությամբ լիբանանյան արաբ հայտնի պատմաբան Սալիհ Զահր ալ-Դինը գրում է, որ «Ինքը լրիվ համամիտ է պրոֆ. Ն. Հովհաննիսյանի այն տեսակետին, թե «Դեռևս XIX դարի վերջին-XX դարի սկզբին արաբական և հայկական քաղաքական միտքը հանգեց այն եզրակացության, որ արաբների և հայերի ազգային շահերը համընկնում են, որ

30. Տես՝ **N.Hovhannisyan**, The Armenian Genocide. Armenocide. Causes, Commission, Consequences, Yerevan, 2002, p.40-41.

նրանք տառապում են միևնույն օսմանական լծից և ունեն մի ընդհանուր թշնամի՝ օսմանյան բռնապետությունը, հետևաբար՝ նրանք բախտակից ժողովուրդներ են»:[31] Ի պաշտպանություն մեր այդ տեսակետի են հանդես եկել նաև Ումար ալ Դակակը, Ադնան ալ-Սայիդ Հուսեյնը և ուրիշներ: Արաբահայկական բարեկամական համագործակցությունը, բնականաբար, ենթադրում էր հայերի կողմից արաբների ազգային իրավունքների պաշտպանություն ընդդեմ օսմանյան իշխանությունների հակաարաբական քաղաքականության, և արաբների կողմից հայերի իրավունքների պաշտպանություն՝ ընդդեմ թուրք-քրդական հակահայկական քաղաքականության:

Այսպիսով, հենվելով վերոշարադրյալ նյութի և արաբական հեղինակների ինքնատիպ դիտարկումների վրա, կարելի է ներկայացնել հայկական հարցում ուժերի դասավորության և այդ ուժերից յուրաքանչյուրի գործառույթի հետևյալ սխեման. **թուրքեր (իշխանություններ)՝ դահիճներ– քրդեր և չերքեզներ՝ դահիճների կամակատար ջարդարար օգնականներ– հայեր՝ զոհեր, և արաբներ՝զոհերի, հայերի, որպես բախտակից ժողովրդի պաշտպաններ:**

***

Քրդական գործոնը տիպաբանորեն պատկանում է Հայոց ցեղասպանության իրականացման առանցքային հարցերին: Օսմանյան կառավարողները, օգտագործելով քրդերին որպես զենք հայերին բնաջնջելու գործում, հարստացրին իրենց դահճային զինանոցը: Արաբ հեղինակներն առաջնայինը համարելով օսմանյան ղեկավարության քաղաքականությունը, իսկ քրդերի հակահայկական գործունեությունը դիտելով դրանից բխող երևույթ, բնավ չեն ցանկացնել դույզն ինչ նվազեցնել քրդերի պատմական պատասխանատվությունը: Քրդերն ունեն

31. **Սալիհ Զահր ալ-Դին,** Օսմանյան կառավարության քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում, Բեյրութ, 1996, էջ 28-29, հայերեն և արաբերեն :

մեղքի իրենց բաժինը և գիտությունը չի կարող դա անտեսել: Ահա թե ինչու նրանք այդքան մեծ տեղ են հատկացրել քրդերի մասնակցությանը հայկական կոտորածներին և 1915թ. ցեղասպանությանը:

Ֆուադ Հասան Հաֆիզը, Մուսա Պրենսը, Մարվան ալ-Մուդավարը, Ուսման ալ-Թուրքը, Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամը և այլ արաբ հետազոտողներ, հանգամանորեն անդրադարձել են քրդերի հակահայ գործունեությանը՝ կապված Հայկական հարցը միջազգային դիվանագիտության հարցի վերածվելու, 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կնքված Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի (1878թ. մարտի 3) և Բեռլինի կոնգրեսի (1878թ. հունիսի 13 - հուլիսի 13) տրակտատի հետ: Արաբ պատմաբանները դրական են գնահատել Սան Ստեֆանոյի պայմանագիրը, հատկապես նրա 16-րդ հոդվածը, որում արձանագրված էր. «Բարձր Դուռը (իմա Օսմանյան կայսրությունը- Ն.Հ.) պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հատուցվող բարելավումներ և բարենորոգություններ, **և զերծ պահել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից**»:[32] Արաբ պատմագիրների համար տվյալ դեպքում ամենակարևորը հայերի անվտանգության ապահովումն էր քրդական և չերքեզական հարձակումներից, կողոպուտներից և թալանից: Կար նաև ևս մեկ այլ պայման, որը չի վրիպել արաբ հեղինակների աչքից: Ըստ Սան Ստեֆանոյի պայմանագրի, Օսմանյան կողմը համաձայնվում էր, որ Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերը կմնան վեց ամիս ժամանակով, որի ընթացքում Արևմտյան Հայաստանում պետք է կիրառվեին բարենորոգումները: Ռուսական զորքերի ներկայությունն արաբ հեղինակներն իրավացիորեն ընկալել են բարեփոխումների և հայության անվտանգության երաշխիք:

32. Берлинский Трактат, Берлин, 1/13,1878, в сб. **Г Азатян**, Судьбоносные договора, Ереван, 2000, с. 39.

Սան Ստեֆանոյի պայմանագիրը դիտարկվեց որպես ռուսական դիվանագիտության հաղթանակ, և Մեծ Բրիտանիային ու Ավստրո-Հունգարիային հաջողվեց Գերմանիայի կանցլեր Օտտո Բիսմարկի աջակցությամբ 1878թ. հասնել Բեռլինում կոնգրեսի գումարման, որը վերանայեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը, այդ թվում և նրա 16-րդ հոդվածը, որը Բեռլինի տրակտատում վերածվեց 61-րդ հոդվածի: Սակայն նրանում տեղ չգտավ Հայաստանում բարեփոխումների իրականացումը ռուսական զորքերի ներկայությամբ դրույթը, որը երաշխիքներ էր տալիս ոչ միայն բարեփոխումների կիրառմանը, այլև հայերի անվտանգությունը զերծ պահում քրդական և չերքեզական հարձակումներից: Արաբ պատմաբանները դա համարեցին խիստ վտանգավոր հայերի անվտանգության ապահովման տեսակետից:[33] Այդ բոլորի հետևանքով ոչինչ չփոխվեց հայերի նկատմամբ օսմանյան քաղաքականության մեջ: Բարեփոխումները չկիրառվեցին և դրանում արաբ պատմաբանները մեղադրում են ոչ միայն սուլթան Աբդուլ Համիդ II -ին և քրդերին, այլև մեծ տերություններին, առաջին հերթին Մեծ Բրիտանային և Գերմանիային: «Անգլո-ռուսական մրցակցությունը և բիսմարկյան մաքիավելիզմը,- գրում է արաբ պատմաբան Մուսա Պրենսը,-թույլ չտվեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի իրականացումը»:[34] Իսկ Ֆուադ Հասան Հաֆիզը և Ուսման ալ-Թուրքը հավելում են, որ Մեծ Բրիտանիան անհանգստությամբ էր նայում ցարական Ռուսաստանի ուժեղացմանը և նեղուցների վրա նրա վերահսկողությունը հաստատելու առաջխաղացմանը և նրան ստիպեցին իր զորքերը դուրս բերել Արևմտյան Հայաստանից և Թուրքիային վերադարձնել Էրզրումն ու Բայազեդը: Եվ հայերը միայնակ մնացին թուրքերի ու քրդերի դեմ հանդիման, իսկ Ուսման ալ-Թուրքի դիպուկ բնութագրությամբ, Արևմտյան Հայաստանում բարեփոխումնե-

33. Մարվան ալ-Մուդավար, Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982, արաբերեն :

34. Moussa Prince, L'Armenocide, Lebanon, 1975, p.75 :

ը և հայերին քրդերից ու չերքեզներից ապահովագրելը մնացին տեսական ցանկություններ, որոնց իրականացման համար ոչ մի քայլ չձեռնարկվեց»: Հետաքրքրական է նաև նրա կարծիքն առ այն, որ մեծ «պետություններն անկեղծ չէին հայերին թուրքական ստրկությունից ազատագրելու հարցում»:

Բեռլինի կոնգրեսից հետո հայերի կոտորածներն ավելի մեծ ծավալներ ընդունեցին, որին ակտիվորեն ներգրավվեցին քրդերը: Բեռլինի կոնգրեսից հետո՝ 1891 թ. կազմավորվեց քրդական Համիդիե հեծելազորը, որի մասին մենք արդեն նշել ենք: Աբդուլ Համիդի հրամանով ստեղծված և օսմանյան կառավարության հաշվին պահվող քրդական այդ հեծելազորը բաղկացած էր 30 գնդերից: 1894-1896թթ. Օսմանյան կայսրությունում իրագործվեցին հայկական նոր ջարդեր, որոնք ծավալների առումով մինչ այդ իրենց նախադեպը չեն ունեցել: Այս անգամ ևս Աբդուլ Համիդ II-ի գլխավոր զենքը, ինչպես հաստատում են արաբ հեղինակները, հանդիսացան քրդական համիդիե հեծելազորը ու Մուսա բեկի տիպի քրդական ցեղապետները: Սալիհ Զահիր ալ-Դինը մատնանշում է, որ Աբդուլ Համիդն իր հակահայկական գործողությունների կենտրոն էր դարձրել Սասունը, համարելով այն «ըմբոստ շրջան, որը պետք է հնազանդեցնել: Եվ սասունցիներին բնաջնջելը որոշվեց իրագործել քրդերի ձեռքով»:[36] Բիթլիսի նահանգապետ Թահսին փաշան 1891թ. իր մոտ է կանչում քրդական գիլան ցեղի քուրդ ցեղապետներին և սուլթան Աբդուլ Համիդի անունից պահանջում ջիհադ՝ սրբազան պատերազմ սկսել հայերի դեմ: Սակայն, ինչպես վկայում է արաբ պատմաբանը, «Ջիհադ տեղի չունեցավ ո՛չ 1891, ո՛չ 1892 և ոչ էլ նույնիսկ 1893թ., քանի որ քուրդ շեյխերի մի մեծ թև, դեմ լինելով նման պատերազմի, հրաժարվեց մասնակցել դրան: Թեև որոշ քրդական ցեղեր տեղական բնույթի հարձակումներ գործեցին ավարի ակնկալիքով, սակայն համատարած հարձակումներ տեղի չունեցան: Ընդհակառակը, 1891-1892թթ. հայտնի են հայ-քրդական համագործակցության շատ դեպքեր Սասունի գյուղերում՝ ընդդեմ թուրքերի»:[37] Դժբախտաբար, հայ քրդական նման համագործակցությունը քուրդ ցեղապետների և օսմանյան սուլթանի մեղքով, չդարձավ մշտական գործոն և չվերածվեց մշակված ու գիտակցված քաղաքականություն: Դա հաստատում են արաբ հեղինակները, վկայակոչելով «Սասունի դեմ 1894թ. ձեռնարկած թուրք-քրդական ռազմական գործողությունները», Համիդի զորագնդի վայրագությունները Բահա ալ-Դին փաշայի գլխավորությամբ[38] և այլն: Արաբ հեղինակները նշում են, որ արյունարբու սուլթանը հետագայում ևս բազմիցս քրդերին օգտագործել է հայերի դեմ և նրանց ձեռքով իրականացրել հայերի կոտորածները, ինչպես 1903թ., երբ Անատոլիական 4-րդ բանակի հրամանատար Զաքի փաշան, կատարելով սուլթանի հրամանը, սպառնաց քրդական ցեղերի դեմ խիստ միջոցներ ձեռնարկել, եթե նրանք չմասնակցեն Սասունի դեմ նոր հարձակմանը: Եվ նա ոտքի հանեց 25000 զինյալ քրդերի՝ ընդդեմ Սասունի հայերի: Սալիհ Զահիր ալ-Դինը, որն առանձին քննարկման է ենթարկել այդ հարցը, նշում է, որ «Սասունցիների հերոսական ինքնապաշտպանությունը օսմանյան սուլթանին համոզեցին, որ այդ լեռնային շրջանի մաքրագործումն այնքան էլ հեշտ գործ չէ և դրա համար մեծ ռազմական ուժեր են պահանջվում»:[39]

Եվ այդպես շարունակաբար, ընդհուպ 1915թ., երբ սկսվեց Հայոց Մեծ եղեռնը:

***

Նախքան Հայոց ցեղասպանությանը քրդերի մասնակցության հարցի լուսաբանությանն անցնելը, կարևոր ենք համարում կանգ առնել հայերի, արաբների և Օսմանյան կայսրու-

35. **Ուսման ալ-Թուրք,** Էջեր հայ ազգի պատմությունից, Հալեբ, 1960, էջ 189, արաբերեն:

36, **Սալիհ Զահիր ալ-Դին**, Օսմանյան կառավարության քաղաքականությունը, էջ 28-29:

37. Նույն տեղում:

38. Նույն տեղում:

39. Նույն տեղում, էջ 21:

թյան մյուս ոչ թուրք ժողովուրդների հարցի լուծման կամ կարգավորման իրավական կողմի վրա, որն առաջարկում էին արաբ մտավորականները և ազգային-քաղաքական գործիչները:

Արաբական պատմագիտության մեջ հայերի և արաբների պահանջների քննարկման առումով իր ուրույն տեղն է գրավել ապակենտրոնացման՝ որպես Օսմանյան կայսրությունում ազգային հարցի լուծման մոդելի, լուսաբանությունը: Օսմանյան կայսրության ապակենտրոնացման մոդելը հրապարակ իջավ 1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, որի արդյունքում տապալվեց սուլթան Աբդուլ Համիդ II: Ապակենտրոնացման մոդելի գաղափարն իր ջերմ կողմնակիցներն ունեցավ կայսրության համարյա բոլոր ժողովուրդների մոտ, մասնավորապես արաբների և հայերի: Այդ մոդելի պաշտպանությունը արաբական համարյա բոլոր երկրներում և արաբական սոցիալական տարբեր խավերի կողմից շատ կարևոր հանգամանք էր, քանի որ արաբները Օսմանյան կայսրության թվաքանակով ամենամեծ ժողովուրդն էին և թվաքանակով գերազանցում էին նաև թուրքերին: Բացի այդ, մեծ էր նաև նրանց քաղաքական կշիռը և դերակատարությունն ամբողջ կայսրությունում:[40] Արաբները 1912թ. Կահիրեում հիմնեցին «Հիզբ ալ-մարքազիյա ալ-իդարիյա ալ-օսմանի»՝ «Օսմանյան վարչական ապակենտրոնացման կուսակցությունը», որը կրճատ կոչվում էր Լամարքազիյա, այսինքն Ապակենտրոնացում: Նրա պահանջների մեջ կենտրոնական տեղ էր գրավում Օսմանյան կայսրության արաբական և մյուս ոչ թուրք ժողովուրդներով, այդ թվում և հայերով, բնակեցված վիլայեթներին հատուկ նահանգային կարգավիճակ տալու պահանջը: Վիլայեթ-նահանգները պետք է ունենային իրենց կառավարությունները և նահանգային ժողովները՝ օժտված լայն իրավունքներով, այդ թվում օտարերկրյա խորհրդատուներ նշանակելու իրավունք՝ տվյալ նահանգում ոստիկանությունը, ժանդարմերիան, արդարադատությունը և ֆինանսները վերակառուցելու համար:

40. Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Ն.Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմությունն, հ. II, Եր.,2004, էջ 477-495:

Հետաքրքրական է, որ ապակենտրոնացման մոդելն իր կողմնակիցներն ունեցավ նաև թուրք առանձին քաղաքական գործիչների, այսպես կոչված լիբերալ հոսանքի շարքերում, որի ղեկավարն էր իշխան Սաբահեդդինը, սուլթան Աբդուլ Համիդի զարմիկը, քրոջ որդին: Նա տեսնում էր, որ Օսմանյան կայսրությունը խորը ճգնաժամ է ապրում, մտահոգ էր նրա ապագայով, գոյության հեռանկարով : Նա ցանկանում էր հաղթահարել կայսրության հետամնացությունը, նրան վերածել առաջադիմական և զարգացած երկրի: Նա դա կապում էր նաև ազգային հարցի հետ, ուստի կողմնակից էր, որ ոչ թուրք ժողովուրդներին տրվի լայն ինքնավարություն և Օսմանյան կայսրությունը վերակառուցել իրավահավասարազոր ինքնավար կազմավորումների կոնֆեդերացիայի: Իշխան Սաբահեդդինը գտնում էր, որ նման իրավունքից պետք է օգտվեին նաև արևմտահայերը, նրանց վերակազմավորված վիլայեթները: Սաբահեդդինի հայացքները պաշտպանություն գտան 1911թ, ձևավորված «Ազատություն և համաձայնություն» կուսակցության ղեկավարության կողմից, որը հավանություն տալով ապակենտրոնացման սկզբունքին, այն ավելի զարգացնելով ու հստակեցնելով, առաջադրեց «Բալկանյան երկրները՝ բալկանյան ժողովուրդներին», «Արաբական երկրները՝ արաբներին», «Հայաստանը՝ հայերին» «Քրդստանը՝ քրդերին» կարգախոսները:[41]

Ապակենտրոնացման կողմնակից էին հայերը՝ պաշտպանելով թե՛ կայսրությունը կոնֆեդերացիայի վերածելու Սաբահեդդինի մոդելը, և թե՝ Լամարքազիայի առաջարկած տարբերակը, որի հաստատումը տեսնում ենք արաբական ականավոր պատմաբան Ա.Հաուրանիի մոտ,[42] որը նշում է, որ Լամարքազիայի ղեկավարությունը մշտական կապերի մեջ էր Սաբահեդդինի, իսկ հայերը՝ Լամարքազիայի հետ:

41. **Луцкий В. Б.** Новая история арабских стран, Москва, 1963, с. 301.
42. **A.Hourani,** Arabic Thought in the Liberal Age. 1798-1939, Cambridge, 1983; Նույնի, National Minorities in the Arab World, London, 1947.

Լամարքազիայի մոդելն ուղղակի առնչվում էր հայ-քրդական հարաբերություններին և նրա իրագործման կոնֆեդերացիայի տարբերակին, որի առանցքային պահանջներից մեկը՝ «Հայաստանը՝ հայերին» իսկ «Քրդստանը քրդերին», կարող էր նպաստել քրդերի և հայերի տարածքային անջատմանը, քրդերի կենտրոնացմանը Հայաստանից դուրս՝ Քրդստանում, ինչն իր հերթին կարող էր վերջ դնել քրդական հակահայկական քաղաքականությանը և դուռ բացել հայ-քրդական հարաբերությունները նոր հիմքի վրա կառուցելու առջև:

Լամարքազիայի ղեկավարությունը տեղյակ էր հայերի այդ դիրքորոշման մասին և պաշտպանում էր այն: Հատկապես այդ հանգամանքն է ընդգծում արաբ պատմաբան Մուսա Պրենսը, նշելով, որ հայերը ձգտում էին վարչական ինքնավարության, վկայակոչելով հայ մեծանուն գրող, Թուրքիայի մեջլիսի՝ պառլամենտի անդամ Գրիգոր Զոհրապին, ինչպես նաև Դաշնակցություն կառուսակցությանը: «Նրանք՝ Զոհրապը և «Դաշնակ» կուսակցությունը,- գրում է արաբ պատմաբանը,- երազում էին մի պետության մասին, որտեղ ազգային տարբերությունները կփոխարինվեին վարչական ինքնավարությունով միայն»:[43] Այդ ուղիով, հավատացած էր Մուսա Պրենսը, «Հայերը ուզում էին զարգացնել իրենց մտավոր և տնտեսական կյանքը»:[44] Արաբական փաստաթղթերը նույնպես վկայում են, որ Լամարքազիա կուսակցության ղեկավարությունը համագործակցում էր հայերի հետ, նրանք խորհրդակցում և համաձայնեցնում էին միմյանց դիրքորոշումները, այդ թվում նաև քուրդ-հայկական հարաբերությունների հարցում՝ ելակետ ունենալով Օսմանյան կայսրության ապակենտրոնացման սկզբունքը: Դրա լավագույն դրսևորումը եղավ Արաբական Առաջին կոնգրեսի գումարումը, որը կայացավ 1913թ. հունիսի 18-23-ը Փարիզում: Կոնգրեսին արաբական երկրների ներկայացուցիչների հետ միասին մասնակցում էր հայ պատվիրակը՝ միակ ոչ

43. **Moussa Prince,** L'Armenocide, p.31.
44. Նույն տեղում:

արաբ մասնակիցը: Կոնգրեսը վերստին հավաստեց իր հավատարմությունը Օսմանյան կայսրության ապակենտրոնացման գաղափարին: Ելույթ ունենալով կոնգրեսում, հայ ներկայացուցիչը հայ ժողովրդի անունից լիակատար աջակցություն հայտնեց արաբներին, նրանց պայքարին և նրանց կողմից առաջադրված ապակենտրոնացման մոդելին: Կոնգրեսն իր հերթին անդրադարձավ հայերի դրությանը կայսրությունում, այդ թվում և քրդերի՝ հակահայկական կտրվածքով, և իր աջակցությունը հայտնեց հայերի ազգային պահանջներին: Այդ հարցի վերաբերյալ կոնգրեսում փայլուն ելույթ ունեցավ, արաբական ազգային-ազատագրական պայքարի ղեկավարներից և քաղաքական էլիտայի ականավոր դեմքերից մեկը՝ Կոնգրեսի նախագահ Աբդ Համիդ ալ-Զահրավին, որը հայտարարեց հետևյալը. «Մեր հայ եղբայրների դրությունը նման է մեր դրությանը: Նրանք այնպիսի մարդիկ են, ինչպես մենք, նրանք մտածում են այնպես, ինչպես մենք ենք մտածում, նրանք պահանջում են այն, ինչ մենք ենք պահանջում: Եվ մենք հաջողություն ենք ցանկանում ինչպես մեզ, այնպես էլ նրանց»:[45] Կոնգրեսի պատվիրակները չբավարարվեցին միայն նախագահի ելույթով, այլ հայկական պահանջները մտցրեցին Կոնգրեսի ընդունած բանաձևում, աջակցություն հայտնելով հայերին նրանց պայքարում, այդ թվում և ընդդեմ քրդական բռնությունների: Դրան հատկացվեց Կոնգրեսի ընդունած բանաձևի 8-րդ կետը. «Կոնգրեսը հավանություն է տալիս և պաշտպանում օսմանյան հայերի պահանջները, որոնք հիմնված են ապակենտրոնացման են սկզբունքների վրա և նրանց պատվիրակի միջոցով ողջույն է հղում նրանց»:[46]

Զուլումի տարիներին քաղաքական ասպարեզում հայտնվեց ևս մեկ արաբական ազդեցիկ կազմակերպություն՝ «Արա-

45. Վասաիկ ալ-մու՛թամար ալ-արաբի ալ-ավալ. 1913-Արաբական Առաջին կոնգրեսի փաստաթղթեր, 1913թ., Բեյրութ, 1985, էջ 117, արաբերեն:
46. Նույն տեղում, Տես նաև՝ **Ն.Հովհաննիսյան**, Արաբական Առաջին կոնգրեսը,1913թ., Հայկական հարց. Հանրագիտարան, Երևան, 1966 , էջ 51:

բական Հայրենիքի լիգան», որի հիմնադիրը լիբանանցի արաբ հայտնի մտավորական Նաջիբ Ազուրին էր: Նա սովորել և երկար տարիներ ապրել էր Փարիզում, որտեղ էլ 1904թ. հիմնել էր վերոնշյալ լիգան: Հետագայում նա հաստավում է Կահիրեում և ծավալում բավականին ակտիվ գործունեություն ընդդեմ օսմանյան բռնատիրության: Նաջիբ Ազուրին գտնում էր, որ ստեղծված ծանր վիճակից միակ ելքը արաբների անկախության նվաճումն էր, որը արմատապես կփոխեր իրադրությունը և կհամախմբեր արաբներին, հայերին, բալկանյան ժողովուրդներին, և այլն: Նա հավատացած էր, որ արաբների անկախության և «Թուրքիայից անջատման շնորհիվ ճնշված բոլոր ազգերը իրենց ազատությունը պիտի ձեռք բերեն, քանի որ արաբների միջոցով է, որ սանձահարում են ալբանացիներին, և ալբանացիների ձեռքով է, որ ճզմում են բուլղարներին: Դարձյալ արաբների ձեռքով է, որ նրանք ճզմում են քրդերին, **և քրդերի ձեռքով է, որ ջարդում են հայերին: Հետևաբար, հենց որ մենք լքենք սուլթանին, ամեն ազգ պիտի իր անկախությունը հռչակի և աշխարհը պիտի փրկվի երկպառակության այն աղբյուրից, որ արևելյան հարց է կոչվում»**:[47]

Ապակենտրոնացման մոդելը չգործեց և չէր էլ կարող Օսմանյան կայսրությունում գործել: Կառավարող երիտթուրքական կուսակցության ղեկավարությունն արաբների, հայերի և մյուս ոչ թուրք ժողովուրդների ապակենտրոնացման և կոնֆեդերացիայի պահանջներին հակադրեց Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացման, ձուլման և էթնիկապես «մաքուր» թուրքական պետություն ստեղծելու բիրտ քաղաքականությունը, որին ձեռնամուխ եղավ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: 1915թ. սկսվեց Հայոց ցեղասպանությունը,1915-1916թթ. Ջեմալ փաշայի հրամանով Դամասկոսում, Հալեբում, Բեյրությում, Երուսաղեմում կախաղան հանվեցին ալ-Զահրավին և արաբական ազատագրական շարժման մոտ 30 ղեկավարները, իշխան Սաբահեդդինը ան-

47. **Ն.Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմություն, հ. II, էջ 448-449:

խուսափելի սպանությունից փախուստի դիմեց և ապաստան գտավ Շվեյցարիայում և այլն: Եվ բոլոր այդ չարագործությունների ժամանակ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի և երիտթուրքական մյուս դահիճների աջակիցները եղել են քուրդ աշիրաթապետները և նրանց հլու-հնազանդ քրդական զանգվածը:

***

Քրդերը դարձան Հայոց ցեղասպանության անմիջական մասնակիցներ նրա առաջին իսկ օրվանից, որը սադիստական սառնասրտությամբ իրականացրին երիտթուրքական դահիճները, հետամուտ լինելով Օսմանյան կայսրությունը էթնիկապես «մաքուր թուրքական պետության» վերածելու ռասիստական ծրագրի կենսագործմանը: Համաձայն այդ դիվային ծրագրի, որի մասին արդեն նշվել է, «Օսմանյան կայսրությունը պետք է վերածվեր էթնիկապես մաքուր թուրքական պետության», Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ազգությունները պետք է դառնային թուրքեր՝ կա՛մ կամովին, կա՛մ էլ բռնությամբ: Իսկ համառորեն հրաժարվող ժողովուրդները պետք է ենթարկվեին ֆիզիկական ոչնչացման: Ուշագրավն այն է, որ երիտթուրքերի հեռահար ծրագրերով թուրքացման ենթակա էին ոչ միայն քրիստոնյա ժողովուրդները՝ հայերը, հույները և ասորիները, այլև իսլամադավան ժողովուրդները՝ արաբները, քրդերը, չերքեզները և այլք: Մուսուլման արաբները հրաժարվեցին ենթարկվել երիտթուրքական այդ դիվային պահանջին և 1916թ. Մեքքայի շերիֆ հուսեյն իբն Ալի ալ Հաշիմիի գլխավորությամբ ապստամբվեցին օսմանյան իշխանությունների դեմ, որը պատմության մեջ մտել է որպես «Արաբական մեծ ապստամբություն», և իրենց լուման ներդրեցին Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտության գործում: Իսկ ինչ վերաբերում է մուսուլման քրդերին, ապա նրանք, ի տարբերություն արաբների, անհեռատեսորեն կրկին գործիք դարձան երիտթուրքերի ձեռքին՝ հայերին իրենց բնօրրանում բնաջնջելու թուրքական հրեշային

ծրագրի իրականացման գործում: Դա նկատել և դատապարտել են ոչ միայն արաբները, այլև այլ ժողովուրդներ և երկրներ:

Այդ տեսակետից խիստ կարևոր է Անտանտի հիմնադիր երեք պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների 1915թ. մայիսի վերջերին արված համատեղ հայտարարությունը, որում ի լուր աշխարհի հայտարարվում էր. «Վերջին ամիսներին Հայաստանի քրդերը և թուրքական բնակչությունը զբաղված են հայերի կոտորածներով: Օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ նրանց օգնությամբ նման կոտորածներ են տեղի ունեցել ապրիլի կեսերին Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Սասունում, Մուշում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում: Վանի մերձակա 100 գյուղերի համարյա ամբողջ բնակչությունը ոչնչացվել է: Վան քաղաքի հայկական թաղերը շրջապատվել և դեռ շրջապատված են քրդերի կողմից: Ի տես Թուրքիայի կողմից այս թարմ ոճրագործությունների, «դաշնակից կառավարությունները հայտարարում են Բարձր Դռանը, որ օսմանյան կառավարության բոլոր անդամները, ինչպես նաև նրանց մասնակցած գործակալները, անձնապես պատասխանատու են հայկական կոտորածների համար»:[48] Այդ կարևոր փաստաթղթում դրա համար պատասխանատու էին համարվում նաև քրդերը: Մեզ մնում է ավելացնել, որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի այդ նախազգուշացումը չսթափեցրեց երիտթուրքերին և քրդերին, որոնք շարունակեցին հայերի ֆիզիկական վերացման իրենց արյունոտ գործը, որի ընթացքում XX դարի առաջին ցեղասպանությանը զոհ գնաց 1,5 միլիոն հայ:

Անտանտի երեք պետությունների համատեղ հայտարարությունն իր ժամանակի համար նորություն էր: Միջազգային դիվանագիտական պրակտիկայում առաջին անգամ որևէ երկրում կատարված ոճրագործության համար պատասխանատու

48. British Documents. From Foreign Office Press .Press Office for Publication in Monday Morning Press (23 May 1915), "Свет", Санкт-Петербург, No 124, 23 мая 1915

էր համարվում տվյալ երկրի կառավարությունն իր ամբողջ կազմով: Կոնկրետ այս դեպքում, Օսմանյան կայսրությունում կատարված ոճրագործության, այսինքն Հայոց ցեղասպանության համար, մեղավոր էր համարվում օսմանյան սուլթանական երիտթուրքական կառավարությունն ամբողջությամբ վերցված: Դա շատ ծանր մեղադրանք էր, որն դրանով իսկ օրակարգի հարց դարձրեց կառավարությունների կոլեկտիվ մեղավորության և պատասխանատվության խնդիրը: Դա չի կորցրել իր արդիականությունը և կարևոր նշանակությունը նաև մեր օրերում և մեծապես նպաստել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումից հետո, այդ սկզբունքը դարձավ միջազգային հարաբերությունների անկյունաքարային նորմերից մեկը, ցեղասպանությունը դիտարկելով ոչ միայն ոճիր և հանցագործություն տվյալ էթնոսի, ժողովրդի կամ ազգի դեմ, այլև ընդհանրապես ոճրագործություն համայն մարդկության դեմ: Ասվածը հավասարապես տարածվում է նաև Հայոց ցեղասպանությունն իրագործած թուրքական և քրդական ոճրագործների վրա:

Մենք Հայոց ցեղասպանության խնդիրներին, այդ թվում և քրդերի մասնակցությանը ու արաբների մարդասիրական դիրքորոշմանը անդրադարձել ենք մեր բազմաթիվ աշխատություններում, որոնք լույս են տեսել նաև օտար լեզուներով արտասահմանյան մի շարք երկրներում: Դրան մենք անդրադարձել ենք նաև մի շարք հոդվածներում, այդ թվում և «**Ազգ**»-ի էջերում, որոնք մատչելի են ընթերցողներին: Ուստի անհրաժեշտ չենք գտնում կրկին անդրադառնալ այդ նյութին: Միայն ավելացնենք երկու կարևոր հանգամանք:

Առաջին, արաբական միջավայրում առաջացավ մի շատ կարևոր գիտական տերմին, որը մինչ այդ հատնի չէր: **Խոսքը «Արմենոցիդ» տերմինի մասին է,** որը շրջանառության մեջ դրեց արաբ պատմաբան Մուսա Պրենսը:[49] Նա այդ տերմինը ստեղ-

49. **Moussa Prince,** L'Armenocide, p. 26-27:

ծել է հենվելով Ռաֆայել Լեմկինի հայտնագործած «գենոցիդ» տերմինի վրա: Դա քաղաքական տերմին է, որի տակ հստակորեն հասկացվում է արմենների՝ հայերի, որպես ցեղատեսակի, էթնոսի ամբողջական ոչնչացում, որի հայկական համարժեքը «հայասպանությունն» է: Ըստ որում Մուսա Պրենսը գտնում է, որ **«Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդն է»**[50]: Եվ հանուն ճշմարտության հարկ է նշել,, որ քրդերը բացասական իմաստով իրենց «արժանի» լուման են ներդրել թե՛ այդ եզրույթի առաջացման և թե՛ ամենագենոցիդային գենոցիդի իրականացման գործում:

Երկրորդ, արաբ պատմաբանների մոտ կասկած չկա, որ 1915թ. հայերի հետ պատահած իրադարձությունները ոչ թե սովորական ջարդեր էին, այլ ցեղասպանություն: Արաբ հեղինակները, Ֆուադ Հասան Հաֆիզը, Սամիր Արբաշը, Սալիհ Զահիր ալ-Դինը և այլք, գտնում են, որ **«Հայոց ցեղասպանությունը XX դարի սև էջն է»**:[51] Ուստի միանգամայն տեղին կլինի ասել, որ քրդերը, նրանց բեկերը և ցեղապետները պատմության սև էջը գրելիս երիտթուրքական դահիճների աջ ձեռքն են եղել:

***

Ուղիղ մեկ դար է անցել Հայոց ցեղասպանությունից: Այդ ընթացքում ահագին ջրեր են հոսել և շատ բան է փոխվել աշխարհում: Հայոց ցեղասպանությունը դադարել է համարվել «Մի մոռացված ցեղասպանություն»: Նա արդեն միջազգայնորեն ճանաչված է, որի գագաթնակետը հանդիսացավ 2015թ. Վատիկանում Սբ. Պետրոսի տաճարում Հռոմի Ֆրանցիսկոս պապի մատուցած պատարագը ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի, Բաղդադում գումարված միջազգային գիտաժողովը, որը փաստորեն համաարաբական և համայն մուսուլմանական աշխարհի դիրքորոշման ցուցադրությունը հանդիսացավ ի

50. Նույն տեղում:
51. **Ֆուադ Հասան Հաֆիզ**, Հայ ժողովրդի պատմությունը... էջ 297:

նպաստ Հայոց ցեղասպանության դատապարտման և ճանաչման: Սակայն դեռ կան անելիքներ: Հայոց ցեղասպանության գլխավոր մեղավոր Օսմանյան Թուրքիայի իրավահաջորդ արդի Թուրքիայի կառավարությունը համառորեն չի ուզում ճանաչել օսմանյան լեգիտիմ դատարանի որոշումը, որը 1919թ. երիտթուրքերի բարձրագույն ղեկավարությանը դատապարտեց մահվան, այդ թվում և Հայոց ցեղասպանության իրականացման համար: Անորոշ և խուսափողական է նաև մարդկության դեմ ուղղված այդ հանցագործության մյուս մեղավորի՝ Թուրքիայի քրդերի ղեկավարության դիրքորոշումը, որոնք այսօր ըստ էության պայքարում են իրենց իրավունքների համար՝ հրապուրված պետականություն ունենալու հեռանկարով: Բայց նրանք մոռանում են, որ իրենք սոսկ Արևմտյան Հայաստանի բնակիչներ են և ոչ ավելին: Խորհրդի կարգով կցանկանայի նրանց ասել, որ չի կարելի պայքարել պետականության համար ուրիշի պետականության տարածքների վրա նստած: Դրա համար ոչ միայն Հիսուս Քրիստոսն է պատժում, այլև Ալլահը և նրա առաքյալ Մուհամմադը:

Այնուամենայնիվ զգուշությունը և արդարությունը լավ բան է:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

I. Քրդական գործոնի ներգործության աշխարհաքաղաքական-տարածքային սահմանները:

Քրդերը Մերձավոր և Միջին Արևելքի հնագույն ժողովուրդներից մեկն են, որոնք վաղնջական ժամանակներից ի վեր տարաբնույթ շփումների մեջ են եղել տարածաշրջանի տարբեր ժողովուրդների՝ արաբների, ասորիների, պարսիկների, հայերի, ապա նաև թուրքերի հետ: Ու թեև նրանք երբեք չեն ունեցել իրենց սեփական պետականությունը որպես մեկ միավորված ժողովուրդ, այնուհանդերձ, որոշակի քաղաքական և ռազմական դերակատարում են ունեցել տարածաշրջանում: Այլ կերպ ասած, նրանք որոշակի գործոն են, որից պատմական տարբեր դարաշրջաններում իրենց նպատակների համար մեծապես օգտվել են տարածաշրջանի հզոր պետությունները, առաջին հերթին Արաբական խալիֆայությունը, շահական Պարսկաստանը, Օսմանյան կայսրությունը, նրա իրավահաջորդ՝ Թուրքական Հանրապետությունը և այլն:

Չկարողանալով ստեղծել իրենց ազգային պետությունը, քրդերը, սակայն, իրենց գոյությունը դարերի ընթացքում պահպանել են Մերձավոր Արևելքի տարբեր պետությունների կազմում և շրջանակներում՝ որպես բաժանված ժողովուրդ:

Քրդերի ճնշող մեծամասնությունն արդի փուլում հիմնականում բնակվում է մերձավորարևելյան չորս պետություններում՝ Իրաքում, Իրանում, Սիրիայում և Թուրքիայում[52], չկորցնելով գործոնի իր գործառույթները: Դեռ ավելին, նրանք որպես գործոն երբեմն այնքան ազդեցիկ են, որ շատ հաճախ լուրջ, անգամ զինված մարտահրավերներ են նետում նշված երկրների իշխանություններին, իսկ վերջիններիս միշտ չէ, որ հաջողվում է անտեսել կամ հաշվի չնստել քրդերի քաղաքական պահանջների հետ: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա. **քրդական գործոնն ունի իր վեկտորները, դրսևորվում է տարբեր աստիճաններով և ուղղություններով ու տարբեր դերակատարումներ ունի նշված չորս երկրներում:**

Իրաքյան Քրդստանում քրդերը, օգտվելով Իրաքի պետական կազմալուծումից և տկարությունից, իրենց իրավունքների տեսանկյունից հասել են առավել տպավորիչ նվաճումների: Եվ երբ 1958թ. հուլիսի 14-ին Իրաքում տապալվեց Հաշիմյան միապետությունը, ապա Իրաքը հռչակվեց որպես արաբների և քրդերի միասնական հանրապետություն, ինչն առանձին հոդվածով ամրագրվեց երկրի սահմանադրության մեջ:[53] Քրդերն Իրաքում նվաճել են քաղաքական ինքնավարության այնպիսի բարձր աստիճան, որն ընդհուպ մոտեցել է անկախության կարգավիճակի և Բաղդադը զրկվել է քրդական շրջանների վրա ազդելու համարյա բոլոր լծակներից, իսկ Իրաք պետության նախագահի պաշտոնը պատմության մեջ առաջին անգամ գրավել քուրդը՝ Ջալալ Թալաբանին: Իրաքի քաղաքական կարգավորման խնդիրն անհնար է լուծել առանց քրդական գործոնի հաշվառման:

Այլ է պարագան Իրանի Իսլամական Հանրապետությունում (ԻԻՀ): Քրդերն այստեղ հատուկ կարգավիճակ չունեն, ինչպես

52, Տես, **N. Hovhannisyan**, The Persian Gulf War and Kurdish Problem, Acta Kurdica, Curzon Press, London Vol.I, 1994, p.63-72.

53. **Н.Оганесян,** Национально-освободительное движение в Ираке (1918-1958), Ереван, 1976; **Ն. Հովհաննիսյան,** Արաբական երկրների պատմություն, Հ.III, Ե87ան, 2006:

Իրաքում: ԻԻՀ-ում պաշտոնապես գտնում են, որ քրդական հատուկ հարց գոյություն չունի և քրդերի իրավունքների խնդիրը փորձ է արվում լուծել համաիսլամական հինադրույթների շրջանակներում[54]: Իրանական իշխանությունները նկատի առնելով, որ քրդերը նույնպես մուսուլմաններ են, ինչպես բնակչության հիմնական մասը կազմող պարսիկները, և ղեկավարվելով իսլամի այն հիմնադրույթով, որ բոլոր իսլամադավան ժողովուրդները կազմում են մեկ համընդհանուր «Իսլամական ազգ» («Islamic Nation»),[55] անհրաժեշտ չեն գտնում քրդերին առանձնացնել այդ ընդհանուր զանգվածից և նրանց տրամադրել տարածքային, քաղաքական, մշակութային կամ կրոնական ինքնավարության պես որևէ բան, գտնելով, որ քրդերը Իրանի իսլամական բնակչության կամ իսլամական ազգի բաղադրամասերից մեկն են: Հետևաբար, Իրանում հրապարակի վրա չկա քրդական գործոնի որևէ տեսանելի, առարկայական դրսևորում և դրա հետ կապված որևէ գործառույթ: Բայց սխալ կլիներ այդ հիման վրա հաշվից լրիվ դուրս նետել քրդերին, մանավանդ մեր օրերում, երբ տեղի է ունենում քրդերի ազգային ինքնագիտակցության որոշակի զարթոնք, այդ թվում նաև Իրանում: Չպետք է բացառել ստորջրյա որոշակի հոսանքների առկայությունը քրդերի քաղաքական իրողություններում: Համենայն դեպս, մենք հեռու ենք այն մտքից, թե քրդերը միանգամայն և ամբողջապես գոհ են Իրանում տիրող իրողություններից: Կրկնում ենք, բացառված չէ, որ քրդական համայնքի ներսում ընթանում են սովորական աչքի համար ոչ տեսանելի խմորումներ, որոնք գործոնի տեսքով հրապարակավ ի հայտ կգան համապատասխան պայմանների առկայության պարագայում:

Արտաքնապես հանգիստ էր իրադրությունը Սիրիայի քրդաբնակ շրջաններում մինչև 2011թ., երբ սկսվեց համաարաբական ըմբոստությունը, ապա և քաղաքական ասպարեզում

54. **Ն.Հովհաննիսյան**, Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004:
55. Islamic Summit Conference. Documents. The Mecca Declaration, Kuwait, 1981, p.46-48.

հայտնվեց Իրաքի և Սիրիայի իսլամական պետությունը: Քրդերն այստեղ թվաքանակով ամենափոքրն են համեմատած Իրաքի, Իրանի և Թուրքիայի քրդաբնակ շրջանների հետ: Քրդերը Սիրիայում նույնպես չունեին սահմանադրությամբ կամ այլ օրենքներով հաստատված իրավունքներ և հատուկ կարգավիճակ: 2007թ. լինելով Սիրիայում, զրուցելով զանազան մասնագետների, քաղաքական և պետական գործիչների հետ, կարող ենք հաստատել, որ սիրիական իշխանությունները վստահ էին, որ մոտակա տեսանելի ժամանակներում որևէ լուրջ բարդություններ քրդերի հետ չեն առաջանա, նշելով, որ Սիրիան Իրաք չէ և այն ինչ տեղի ունեցավ Տիգրիսի ափերին, նույնը չի կրկնվի Եփրատի ափերին: Բայց սիրիական իշխանություններն իրենց հաշվարկներում սխալվեցին:

Վերջապես քրդական գործոնը Թուրքիայում, որը սկսած անցյալ դարի 50-60-ականներից օրեցօր ավելի ուժգնորեն է դրսևորվում: Թուրքիայում քրդական գործոնի յուրահատկությունը կայանում է նրանում, որ նա, ի տարբերություն քրդական գործոնի Իրաքում, Իրանում և Սիրիայում, թե՛ պատմականորեն և թե՛ արդի փուլում անմիջականորեն առնչություն ունի Արևմտյան Հայաստանի տարածքային հարցի հետ և այդ պատճառով նա բացառիկ տեղ պետք է գրավի քրդական գործոնի վերաբերյալ հայկական հայեցակարգում: 1915թ. Հայոց ցեղասպանությունից հետո, որն իրականացվեց թուրքաբնակ քրդերի ամենաակտիվ մասնակցությամբ և ջանքերով, Արևմտյան Հայաստանը հայաթափ եղավ, բայց անմարդաբնակ անապատի չվերածվեց: Զոհված և արտաքսված հայերի տեղը Արևմտյան Հայաստանում գրավեցին քրդերը՝ իրականացնելով Հայաստանին տեր դառնալու իրենց վաղեմի երազանքները: Եվ Արևմտյան Հայաստանի ապագայի հարցը քննարկելիս մենք անմիջապես բախվելու ենք քրդական անգիջում դիմադրությանը, քանի որ, դատելով նրանց ղեկավարների հայտարարություններից, նրանք Արևմտյան Հայաստանը համարում են քրդական տարածք:

Նախքան թուրքական գործոնին ավելի հանգամանորեն անդրադառնալը, կապված հայկական իրողությունների հետ, որը կարվի հետագա էջերում, հարկ է նշել քրդական գործոնի աշխարհաքաղաքական-տարածքային սահմանները և նրա ներազդման շրջանակները:

Այդ գործոնի սահմանները ներառնում են, առաջին, Մերձավոր և Միջին Արևելքն իր հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան ճյուղավորումներով:

Երկրորդ, քրդական հարցի սրման կամ քրդական գործոնի ակտիվացման դեպքում, նա կազդի ԱՄՆ-ի և Դաշնային Ռուսաստանի քաղաքականության վրա, նկատի առնելով, որ այդ երկու պետությունները ավանդաբար ներգրավված են մերձավորարևելյան հիմնախնդիրների մեջ և անտարբեր չեն, թե ինչպիսի աշխարհաքաղաքական իրադրություն կստեղծվի ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ տարածաշրջանում: Իսկ դա չի բացառում նրանց այս կամ այն կերպ ներգրավվելը հնարավոր հակամարտությանը, ինչն արդեն գլոբալ սպառնալիքի վերածվելու միտում կունենա: Այդ մասին են վկայում նաև վերջին շրջանում ծավալված իրադարձությունները:

Երրորդ, նման իրադրության առաջացման դեպքում կողմնակի դիտորդի դերում չեն կարող մնալ միջազգային այնպիսի կազմակերպություններ, ինչպես ՄԱԿ-ը և նրա Անվտանգության Խորհուրդը, ՆԱՏՕ-ն, մանավանդ որ ԱՄՆ-ը և Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ պետություններ են, ԵԱՀԿ-ը, հատկապես նրա երեք առաջատար պետությունները՝ Գերմանիան, Ֆրանսիան և Իտալիան, որոնք որոշակի քաղաքական, տնտեսական և ռազմավարական շահեր ունեն այդ տարածաշրջանում, Արաբական պետությունների լիգան, Մուսուլմանական համագործակցության կազմակերպությունը և այլն:

Չորրորդ, քրդական կոնֆլիկտի առաջացումն այդ շրջանակներում չի կարող չանհանգստացնել մեզ, քանի որ կոնֆլիկտային իրադրությունը նրա անմիջական հարավային սահմանների մոտ՝ վերոնշյալ ուժերի, պետությունների և միջազգային կազ-

մակերպությունների մասնակցությամբ, պարունակում է որոշակի սպառնալիք Հայաստանի Հանրապետության և այդ երկրներում գտնվող հայ համայնքների համար:

Ահա այսպիսին են ընդհանուր գծերով մեր պատկերացումները քրդական գործոնի, նրա աշխարհաքաղաքական-տարածքային գործառույթների վերաբերյալ:

II. Քրդական դամոկլյան սուրը կախված արևմտահայերի գլխին և «Հայկական հարցը քրդական հարց է» տեսադրույթը:

Քրդական գործոնը վերածվեց դամոկլյան սրի և արևմտահայության գլխին կախվեց, երբ այդ երկու ժողովուրդները՝ քրդերը, ի բացառյալ Իրանի, և հայերը հայտնվեցին Օսմանյան կայսրության կազմում, մի կայսրություն, որը արաբ պատմաբան Յուսուֆ Յազբեկը բնութագրում է որպես ժողովուրդների բանտ:[56]

Օսմանյան կայսրությունն արաբական երկրների նվաճումն սկսեց 1516թ.՝ Սիրիայի գրավումով, որին հետևեց արաբական մյուս երկրների, այդ թվում և Իրաքի նվաճումը:[57] Այդ պահից քրդերի ճնշող մեծամասնությունը, որը բնակվում էր Սիրիայում և Իրաքում, հայտնվեց օսմանյան տիրապետության ներքո: Իսկ երկարատև և արյունահեղ թուրք-պարսկական պատերազմներից հետո, 1639թ., Կասրե Շիրինի պայմանագրով, օսմանյան տիրապետության տակ անցավ Հայաստանի այն հատվածը, որը հետագայում ավելի հայտնի դարձավ որպես Արևմտյան Հայաստան:

Պատմական այդ պահից սկսվում է արևմտահայության ողբերգությունը, որի համար գլխավոր մեղքն ընկնում է օսմանյան սուլթանական իշխանությունների հակահայկական քա-

56. **Ն.Հովհաննիսյան,** Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004, էջ 65:

57. Այդ մասին ավելի մանրամասն տես՝ **Ն. Հովհաննիսյան,** Արաբական երկրների պատմություն (VIIդ-2005), հ..II, Օսմանյան տիրապետության շրջան, Երևան, 2004, էջ 27-42:

ղաքականության վրա: Բայց այդ քաղաքականությունը հավանաբար անհնար կլիներ իրագործել այնպիսի մեծ ծավալներով ու դաժանությամբ, ինչպես որ դա տեղի ունեցավ, եթե օսմանյան իշխանություններին չհաջողվեր նրանում ներգրավել քրդական տարրը, առաջին հերթին նրա կառավարող վերնախավը՝ ցեղային-աշիրաթական ավագանուն, ֆեոդալ շեյխերին, հոգևոր-կրոնական առաջնորդներին: Սուլթանական իշխանությունները հիմք ընդունեցին հայկական մարզերը կոտորակելու, մանրացնելու սկզբունքը, այն հաշվով, որ հայկական շրջաններում, նրա բնօրրանում արհեստականորեն նվազի և փոքրացվի հայ էթնոսը և դրա փոխարեն աճի մուսուլմանական տարրը՝ ի հաշիվ գլխավորապես թուրքերի և քրդերի: Թուրքական իշխանությունները խրախուսում և պայմաններ էին ստեղծում հայկական շրջաններ քրդական տարրի ներթափանցման և մեծամասնության վերածվելու համար: Օսմանյան իշխանությունների օրհնությամբ և ամենաակտիվ աջակցությամբ, քրդական բեկերի, ֆեոդալ-շեյխերի, ցեղային ավագանու տիրապետության տակ էին անցնում հայ գյուղացուն պատկանող հողատարածքները, հանդակները, անասունները և գույքը: Օսմանյան սուլթանական իշխանությունները քրդերին վերածեցին իրենց հիմնական գործիքներից մեկին՝ ճնշելու հայերին, նրանց հողերը խլելու և նրանց սարսափի մեջ պահելու համար: Քրդերը յուրատեսակ մահաբեր դամոկլյան ահեղ սուր դարձան սուլթանների ձեռքում, որը կախված էր արևմտահայերի գլխին: Իսկ հայերը հետադիմական, խավարամոլ Օսմանյան կայսրությունում միանգամայն անպաշտպան էին և անզոր այդ սրի դիմաց:

Այդ բոլորը հանրահայտ իրողություն է, որին լավատեղյակ էր նաև եվրոպական հանրությունը: Ուստի պատահականություն չէ, որ Բեռլինի 1878թ. միջազգային կոնգրեսից սկսած, երբ Հայկական հարցը ներօսմանականից վերածվեց միջազգայինի և հիմք դրվեց Օսմանյան կայսրության հայկական վիլայեթներում այսպես կոչված «բարեփոխումների» քաղաքա-

կանությանը, թե՛ Բեռլինի կոնգրեսի ընդունած որոշման մեջ և թե՛ հետագայում դրան հաջորդած միջազգային որոշումներում կենտրոնական հարցերից մեկը դառնում է «զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»: Սակայն հանրահայտ է, որ օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II-ն այդպես էլ երբեք չիրագործեց այդ բարեփոխումները և շարունակեց իրագործել հայկական ջարդերի ու կոտորածների քաղաքականությունը՝ նույն քրդերի մասնակցությամբ:

Իմ ասպիրանտական ուսումնառության շրջանում (1953-1956թթ), երբ աշխատում էի իմ թեկնածուական ատենախոսության վրա, որը նվիրված էր հայ ժողովրդի պատմության 1910-1914թթ. ժամանակահատվածի ուսումնասիրությանը, ուղղակի անակնկալի եկա, երբ մի շարք աղբյուրներում, մասնավորապես 1910-ականների կովկասյան և պոլսահայ մամուլում հանդիպեցի «Հայկական հարցը քրդական հարց է» ձևակերպմանը:Սկզբում ինձ թվաց, թե դա վրիպակ է: Սակայն վերլուծելով իմ ձեռքի տակ եղած նյութերն ու փաստաթղթերը, եկա այն եզրակացության, որ այդ ձևակերպումը պարունակում էր մեծ ճշմարտություն, և այն պետք է հասկանալ հետևյալ իմաստով:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին քրդերի դիրքերն այն աստիճան էին ամրապնդվել Արևմտյան Հայաստանում, որ այստեղ որևէ փոփոխություն, որը կշոշափեր քրդերի, հատկապես նրանց կառավարող վերնախավի շահերը, կթուլացներ նրանց դիրքերը և կարող էր ամրապնդել հայերի անվտանգությունը, անհնար էր իրագործել առանց քրդերի համաձայնության: Քրդերը, հասկանալի է, հենց այնպես չէին զիջի իրենց դիրքերը հօգուտ հայերի, քանի որ նրանց տիրապետող դիրքերը Արևմտյան Հայաստանում ապահովում էր նրանց անօրինական ճանապարհով հարստություն դիզելու, կողոպտելու հայերին, ամրապնդում նրանց կշիռը Օսմանյան կայսրությունում, նրանց դարձնում ազդեցիկ ուժ, նույնիսկ այն աստիճանի, որ նրանք կարող էին հակադրվել անգամ սուլթանին և ստիպել նրան հրաժարվել հայկական վիլայեթներում «բարեփոխումնե-

րի» խոստումներից: Ահա այսպիսի պայմաններում ասպարեզում հայտնվեց այն տեսակետը, որ հայկական հարցի լուծումը կապված և կախված է քրդական հարցի լուծումից: Հայերի կամ հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ էր նախևառաջ լուծել քրդերի հարցը՝ վերջիններիս ախորժակը և ընչաքաղցությունը բավարարելու իմաստով: «Հայկական հարցը քրդական հարց է» բանաձևը պետք է հասկանալ և մեկնաբանել միայն ու միայն այդ իմաստով:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում իրագործված հայերի, ինչպես նաև XX դարում կիրառված այլ ցեղասպանությունները կյանքի կոչեցին գիտական մի նոր ուղղություն՝ ցեղասպանագիտությունը: Նա ունի իր ուսումնասիրության առարկան, և իր անկյունաքարային տեսադրույթները, առաջին հերթին «ցեղասպան պետություն», «ցեղասպան հասարակություն», «դահիճ և զոհ», «պոլիտիցիդ» և այլ տեսադրույթներ[58]: Դրանց մեջ իր յուրահատկությամբ առանձնանում է ցեղասպանությանը երրորդ կողմի մասնակցության հարցը՝ այն կանխելու կամ օժանդակելու առումով, որը խիստ կարևոր է ցեղասպանություն ոճրագործությունը և նրա ծավալները ճիշտ ըմբռնելու տեսանկյունից: Երբ այս տեսանկյունից ենք մոտենում Հայոց ցեղասպանությանը և քրդերի դիրքորոշմանը, ապա ակնհայտ է դառնում, որ քրդերը Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ դարձան Հայոց ցեղասպանությանը մասնակից երրորդ կողմ՝ կանգնելով դահճի՝ օսմանյան ոճրագործների կողքին, ընդդեմ զոհերի՝ հայերի:[59] **Այդպիսին էր հայկական հարցում քրդական գործոնի առաքելությունը Թուրքիայում:**

Քրդերի նման դիրքորոշումը պատահականություն չէր: Դա նախապատրաստված էր նախորդ դարերում նրանց կատարած բազում հակահայկական գործողություններով: Նրանց մասնակցությունը 1915թ. Հայոց ցեղասպանությանը այդ քաղաքականության տրամաբանական շարունակությունն էր:

58. **Ն. Հովհաննիսյան**, Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002:

59. Տես, Ultimate Crime, Ultimate Challenge. Human Rights and Genocide. An International Conference. Yerevan, April 20-21 2005, p. 18.

Անդրադառնալով այս հարցերին, մեր նպատակը չէ պատմական էքսկուրս կատարել, այլ ցույց տալ թե պատմական ինչպիսի պատասխանատվություն են կրում քրդերը հայկական հարցում: Նման մոտեցումն անհրաժեշտ է ամբողջական պատկերացում կազմելու Թուրքիայում քրդական գործոնի ծավալների ու ողբերգական հետևանքների վերացման դժվարությունների վերաբերյալ և դրա հետ կապված հայկական հայեցակարգի ճիշտ մշակման համար, հատկապես որ, ինչպես նշվեց, այսօր Արևմտյան Հայաստանի տարածքները բնակեցված են մեծամասամբ քրդերով, որոնք այդ տարածքները համարում են իրենց սեփականը:

III. Սևրի պայմանագիրը, չորս պետությունների ստեղծման սկզբունքը և բարեփոխումների քաղաքականության ավարտը:

Սևրի պայմանագիրը, որը ստորագրվեց 1920թ. օգոստոսի 10-ին, երբ Օսմանյան կայսրությունն արդեն պարտություն էր կրել Առաջին համաշխարհային պատերազմում, դիվանագիտական շատ կարևոր փաստաթուղթ է, որի տակ դրված են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Բելգիայի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Սերբերի, Խորվաթների և Սլովենների Թագավորության, Հիջազի, Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի ստորագրությունները: Դա իր բնույթով պատկանում էր Վերսալյան պայմանագրային համակարգին, որը 1919-1920թթ. ստորագրվեց Գերմանիայի և պարտություն կրած գերմանական բլոկի մյուս անդամ երկրների՝ Ավստրիայի, Բուլղարիայի և Հունգարիայի հետ: Այդ համակարգի վերջին ակորդը եղավ Սևրի պայմանագիրը, որով ավարտվեց հետպատերազմյան քաղաքական նոր համակարգի ստեղծման գործընթացը և, ինչպես թվում էր, նոր էջ էր բացվում Հայկական հարցի կարգավորման ճանապարհին:

Սևրի պայմանագրի մասին, որի կնքման ժամանակից արդեն անցել է ավելի քան 95 տարի, շատ է գրվել: Ուստի կանգ չենք առնի նրա մանրամասնությունների վրա: Մեզ հետաքրքրողը Հայկական հարցն է քրդական գործոնի տեսանկյունից: Պայմանագրի տեքստը կազմողները, տվյալ պարագայում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի , ինչպես նաև Իտալիայի և մյուս պետությունների ղեկավարները ոչ միայն խելացիություն և հեռատեսություն են դրսևորել, այլև որոշ հարցերում ցուցաբերել են իմաստնություն: Նրանք հասկացել էին, որ բարեփոխումների քաղաքականությունն իրեն սպառել էր և նրա ժամանակն անվերադարձորեն անցել: Ուրեմն պետք էին հայեցակարգային նոր մոտեցումներ նախկին Օսմանյան կայսրության մեջ մտնող ժողովուրդներին կենսականորեն հուզող հարցերի կարգավորման նկատմամբ: Եվ նրանք գտան այդ նոր մոտեցումը, որը պայմանագրի տեքստում արձանագրված է տարածաշրջանի երեք հիմնական՝ աբորիգեն ժողովուրդների՝ արաբների, հայերի և քրդերի ազգային պետություններ ունենալու տեսադրույթի մեջ: Ինչ վերաբերում է թուրքերին և թուրքական պետությանը, ապա ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան գտան, որ Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական պարտությունը չէր նշանակում ընդհանրապես թուրքական պետության վերացում, ինչպես այդ ժամանակ վայնասուն էին բարձրացրել ռուսական բոլշևիկյան որոշ կուսակցական և պետական գործիչներ, առանձին պատմաբաններ ու քաղաքագետներ: Սևրի պայմանագիրը միայն նպատակահարմար էր գտնում վերացնել Օսմանյան կայսրությունն իր նախկին տարածքներով և ճանաչել թուրքական պետությունը նոր սահմանների մեջ՝ որպես ազգային պետություն: Նա պետք է պարփակվեր միայն Փոքր Ասիայի մի հատվածում՝ ունենալով տարածքային մի նեղ գոտի եվրոպական մասում՝ Ստամբուլով հանդերձ: Եթե Օսմանյան կայսրության տարածքը 1914թ.կազմում էր 1 մլն.589 հազ. 540 քառ. կմ., ապա ըստ Սևրի պայմանագրի, Թուրքիային, որպես պետություն, հատկացվում էր ընդամենը 453 հազ, քառ.կմ,[60] կամ մախկին Օսմանյան կայսրության տարածքի մեկ երրորդը:

Սևրի պայամանագիրը ճանաչեց արաբների անկախ լինելու և իրենց սեփական պետությունն ունենալու իրավունքը: Արաբներն ազատագրվում էին 402 տարի տևած թուրքական լծից, և ստանում իրենց պետականությունը վերակերտելու իրավունք: Հենց Սևրի պայամանագրի շնորհիվ էր, որ հետագայում ստեղծվեց արաբական 18 անկախ պետություն:

Հաջորդը քրդերի հարցն էր, որի հետ, ինչպես նշել ենք, կապված էր Հայկական հարցի արդարացի լուծումը: Ըստ Սևրի պայմանագրի, քրդերը նույնպես կարող էին ունենալ իրենց պետությունը, որը սահմանակցելու էր հայոց պետության հետ: Քրդական հարցի նման լուծումը սկզբունքային նշանակություն ուներ Հայկական հարցի լուծման համար, որի ճանապարհից վերանում էր քրդական գործոնը որպես խոչընդոտ: Պայմանագիրը նախատեսում էր Քրդական շրջանում անցկացնել հանրաքվե՝ որոշելու նրա ճակատագիրը:[61] Նախատեսվում էր նրա կազմում ներառել Եփրատ գետից հարավ ընկած շրջանները, մասնավորապես Դիարբեքիրի վիլայեթը, Բիթլիսի և Վանի վիլայեթների այն հատվածները, որոնք չէին մտնելու Հայաստանի կազմի մեջ: Պայմանագրի III բաժնի 62-64-րդ հոդվածներով նախատեսվում էր Քրդական պետության մեջ մտցնել նաև Մոսուլի վիլայեթը:[62] Սակայն քրդերը չունեին միասնական տեսակետ Քրդստանի սահմանների վերաբերյալ: Մասնավորապես նրանք պահանջում էին Քրդստանի կազմում մտցնել Վանի նահանգն ամբողջությամբ, Քրդստանին ելք տալ դեպի ծով Իսկենդերունի շրջանից: Նրանք հավակնություններ ունեին նա Էրզրումի և Սասունի նկատմամբ: Այդ հավակնություններից և ոչ մեկը չմտցվեց Սևրի պայմանագրի տեքստում: Այդ պայմանագրից դուրս մնացին նաև Իրանի, բրիտանական վերահսկողության տակ գտնվող Իրաքի և Ֆրանսիայի կողմից վերահսկվող Սիրի-

60. http://en.wikipedia.org/wiki/Treaty_of_S%C%A8vres.Kurdistan
61. Նույն տեղում:
62. Նույն տեղում:

այի քրդերը:[63] Սակայն «Սևրի պայմանագիրը ուրվագծեց հատյալ Քրդստան՝ տեղակայված Թուրքիայի տարածքում»[64] :

Եվ, վերջապես, Հայկական հարցը, որին նվիրված էին Սևրի պայամանագրի 88-93 հոդվածները: Ըստ պայմանագրի Թուրքիան ճանաչում էր «Հայաստանը որպես ազատ ու անկախ պետություն»: Թուրքիան և Հայաստանը համաձայնվում էին իրենց միջև սահմանների վերջնական սահմանազատումը թողնել ԱՄՆ-ին և նրա պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին: Այդ մասին ամերիկյան պրեզիդենտին խնդրել էին նաև Անտանտի պետությունները: Վիլսոնը համաձայնվեց այդ առաջարկի հետ և 1920թ. նոյեմբերի 22-ին ներկայացրեց իր առաջարկությունները՝ Վիլսոնի իրավարարական պայմանակարգը: Համաձայն վիլսոնյան առաջարկի Հայաստանը ստանում էր Էրզրումի նահանգն համարյա ամբողջությամբ, Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը և Տրապիզոնի նահանգի մեծ մասը՝ դեպի Սև ծով ելքով, մոտ 100 հազ. քառ. կմ.: Նա կարող էր միավորվել դեռևս 1918թ. մայիսին հռչակված Հայաստանի Հանրապետության հետ, որի արդյունքում կստեղծվեր անկախ և միացյալ Հայաստանը՝ մոտավորապես 160 հազ.քառ. կմ տարածքով:

Հայաստանը և Թուրքիան ընդունեցին Վիլսոնի իրավարարական պայմանակարգը:

Տարաբախտաբար, Սևրի պայմանագիրը կիրառվեց միայն այն մասով, որը վերաբերում էր թուրքերին և արաբներին: Ինչ վերաբերում է պայմանագրի հայկական և քրդական մասերին, ապա Թուրքիայում իշխանությունը վերցրած քեմալականները, վայելելով բոլշևիկյան Ռուսաստանի լենինյան ղեկավարության քաղաքական ու ռազմական լայն աջակցությունը, մերժեցին ճանաչել Սևրի պայմանագիրը,[65] ինչը ամրագրվեց Լոզանի 1923թ. պայմանագրով:

Ահա այսպես, պատմության բարեհաճ այդ պատեհ առիթը ձեռքից բաց թողնվեց:

63. Նույն տեղում:
64. Նույն տեղում:
65. Հայկական հարց. Հանրագիտարան, Երևան, 1996, էջ 411-413; **Ն. Հովհաննիսյան**, Սևրի դաշնագիր. 80 տարի անց, Համաեվրոպական անկախ ամսագիր՝ «Օրեր», Պրահա, Հուլիս-Օգոստոս, 7-8/2000, էջ 13-14:

IV.Արևմտյան Հայաստանի հիմնախնդրի կարգավորման հնարավոր տարբերակները

Նկատառումներ և առաջարկություններ

Հայաստանը, որքանով մեզ հայտնի է, երբեևիցե չի ունեցել որևէ հայեցակարգ քրդական հարցում՝ Արևմտյան Հայաստանի հիմնախնդիրների կարգավորման տեսանկյունից: Դա ավելի քան զարմանալի է, քանի որ լրացել է արդեն մեկ դար այն պահից, երբ քրդերի մասնակցությամբ իրագործվեց Հայոց ցեղասպանությունը և նրանք դարձան Արևմտյան Հայաստանի հիմնական բնակիչները: Մինչդեռ նման հայեցակարգի մշակումն ավելի քան անհրաժեշտ է ինչպես հայերի ազգային անվտանգության ապահովման, այնպես էլ հայ ժողովրդի՝ Արևմտյան Հայաստանի բնիկների օրինական իրավունքները վերականգնելու իմաստով: Դա անհրաժեշտ է որպեսի Հայաստանը դառնա ողջ հայության լիարժեք և ամբողջական երկիրն ու պետությունը:

Ելնելով այդ իրողություններից անհրաժեշտ ենք համարում.

1.Հայաստանի իշխանությունների առաջնահերթ, գերակա և անհետաձգելի խնդիրներից մեկը համարել քրդական հարցի նկատմամբ հայկական հայեցակարգի մշակումը, որը պետք է դրվի Հայաստանի Երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության հիմքում՝ որպես նրա կարևոր ուղղություններից մեկը:

2. Այդ հարցը պետք է համարվի ոչ միայն Հայաստանի Երրորդ Հանրապետության, այլև համայն հայության գերակա խնդիր:

3. Հայեցակարգը մշակելու համար ստեղծել համահայկական հանձնաժողով Հայաստանի, Արցախի և Սփյուռքահայության ներկայացուցիչների և մասնագետների լիարժեք մասնակցությամբ, որի աշխատանքները պետք է համակարգի ՀՀ Նախագահը:

4. ՀՀ Արտաքին գործերի նախարարության կամ Ազգային անվտանգության խորհրդի կազմում ստեղծել հատուկ մար-

մին, որի հիմնական խնդիրն է լինելու հարցի համակողմանի, խորքային ուսումնասիրությունը, ներկայացվող առաջարկությունների մշակումն ու նախապատրաստումը, միջազգային իրադրության նպաստավոր կամ աննպաստ լինելու, ուժերի փոխհարաբերակցության և այլ հանգամանքների վերլուծությունը՝ դրանք Հայեցակարգային հանձնաժողովին ներկայացնելու համար:

5. Հայեցակարգի հիմնադրույթները համայն հայության կողմից ընդունելի լինելու և միասնական տեսակետ մշակելու համար Հայաստանում և Սփյուռքում անցկացնել քննարկումներ և խորհրդակցություններ:

6. Քրդական հարցում հայկական հայեցակարգը մշակելիս ելակետային համարել հետևյալ իրողությունները.

ա. Արևմտյան Հայաստանը բնակեցված է հիմնականում քրդերով և ըստ էության գտնվում է նրանց տիրապետության ներքո:

բ. Քրդերը ոչ միայն պատրաստ չեն և չեն ցանկանում դա համարել հայկական տարածք, այլև հավակնում են դրան՝ որպես իրենց տարածքի:

գ. Թյուրիմացությունների տեղիք չտալու համար հստակ և անվերապահորեն շեշտել, որ Արևմտյան Հայաստանը երբեք քրդերի բնօրրանը չի եղել, նրանց երկիրը չէ և չի կարող լինել:

7. Կապեր հաստատել քրդական ղեկավարության և նրա լիազոր ներկայացուցիչների հետ քննարկել Արևմտյան Հայաստանի հիմնախնդրի կարգավորման շրջանակները:

8. Բացահայտել և պարզել, թե ո՞ր երկրները և միջազգային կազմակերպությունները որպես երրորդ կողմ կարող են մասնակից լինել հարցի արդարացի կարգավորման գործընթացին և իրենց բարի ծառայություններն առաջարկել:

V. Հիմնախնդրի կարգավորման հնարավոր տարբերակները

Նշված հարցի շուրջը ստեղծվել է բարդ ու խառնաշփոթ իրավիճակ և Հայաստանը գործ է ունենալու մի այնպիսի անպատասխանատու երկրի հետ, ինչպիսին Թուրքիան է, որը

թուրք ցեղասպանագետ Թաներ Աքչամի բնութագրմամբ հանդիսանում է ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիրը: Ուստի սին հույսեր չպետք է տածել, թե հնարավոր է հիմնախնդրի համեմատաբար արագ կամ դյուրին լուծում: Մանավանդ մեր օրերում, երբ Թուրքիայի կառավարությունը Էրդողանի գլխավորությամբ սկսել է կիրառել նեոսմանիզմի քաղաքականությունը: Այդուհանդերձ, այդ հանգամանքը և այլ դժվարություններ չեն կարող արդարացում հանդիսանալ, եթե հայությունն իր երեք ճյուղավորումներով՝ Հայաստանի Հանրապետություն, Արցախ և Սփյուռք, ընկրկի դրանց առջև և հրաժարվի հայության գոյության համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող հայեցակարգի մշակումից:

Ինչքան էլ որ քրդերն ուժեղ լինեն, միևնույն է, նրանք, հավասարապես նաև հայերը, չեն կարող անտեսել Թուրքիան որպես պետություն, որի շրջանակներում և իրավական ենթակայության տակ են գտնվում Արևմտյան Հայաստանը կազմող տարածքները: Ուստի հայեցակարգը մշակելիս այդ պարագան հաշվի առնելը հույժ անհրաժեշտություն է:

Առաջարկելով հիմնախնդրի կարգավորման տարբերակներ, չպետք է այնքան միամիտ լինել և ենթադրել, թե դրանք ինքնին, ինքնաբերաբար կարող են հաջողություն ապահովել: Պատմության մեջ նման բաներ տեղի չեն ունենում: Ամեն ինչ պայքար է, և պատրաստ պետք է լինել բոլոր ուղղություններով համբերատար, հետևողական ու երկարատև պայքար մղելու համար: Այդ հավատով ու գիտակցությամբ ստորև ներկայացնում ենք մեր առաջարկությունները՝ որպես հայկական հայեցակարգի տարբերակներ քննարկելու, ընդգծում ենք՝ քննարկելու համար:

Տարբերակ Առաջին. Արևմտահայերի վերադարձն իրենց բնակավայրեր:

Այս տարբերակը Արևմտյան Հայաստանը հայերի՝ նրա օրինական տերերի տնօրինության տակ վերադարձնելու տարբերակներից մեկն է: Նա ունի երեք կարևոր առանձնահատկու-

թյուն: Առաջին, դա հարցի ոչ արյունահեղ ճանապարհով կարգավորելու տարբերակ է, ինչն ինքնին վերցված՝ դրական երևույթ է: Երկրորդ, դա համապատասխանում է արդի միջազգային իրավունքի նորմերին, որը պարտադիր է համարում բռնի տեղահանված ժողովուրդներին հնարավորություն տալ վերադառնալու իրենց բնակության նախկին վայրերը: Միջազգային իրավունքը դառնում է այդ տարբերակի խաղաղ և հետևողական կիրառման երաշխավոր: Երրորդ, այդ տարբերակի իրագործումը հնարավոր է, եթե տվյալ պետությունը, մեր դեպքում Թուրքիան, համաձայնվի կամ ստիպված լինի համաձայնվել նրա հետ: Այդ տարբերակի իրագործման համար անհրաժեշտ է նաև քրդերի համաձայնությունը, ինչին կարելի է հասնել թուրքական իշխանությունների, Հայաստանի Հանրապետության, ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի համատեղ ջանքերով, մեծ տերությունների, առաջին հերթին ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, հավասարապես նաև Չինաստանի ու Հնդկաստանի աջակցությամբ:

Տարբերակ Երկրորդ. Տարածքային ինքնավարություն

Այս տարբերակը կարելի է գործողության մեջ դնել այն պարագայում, եթե Թուրքիան մերժի ճանաչել Արևմտյան Հայաստանի անկախությունը կամ Հայաստանի Հանրապետության հետ միավորվելու նրա իրավունքը, բայց համաձայնվի արևմտահայերի և նրանց ժառանգորդների վերադարձին իրենց նախկին բնակավայրերը և նրանց շնորհվի քաղաքացիություն: Այդ դեպքում տարածքային ինքնավարությունը կհամարվի որպես հայերի կեցության, նրանց ազգային, հասարակական և տնտեսական կյանքի կազմակերպման modus vivendi, ինչ-որ չափով կկարգավորի և կկանոնակարգի հայերի գոյությունը թուրքական պետության շրջանակներում և կհաստատի հայերի տեղական մարմինների և թուրքական իշխանությունների միջև ուղղաձիգ հարաբերություններ:

Տարբերակ Երրորդ. Մշակութային ինքնավարություն

Եթե թուրքական կառավարությունը մերժի իրենց բնօրրանը

վերադարձած հայերին տալ տարածքային ինքնավարություն, որը ժամանակակից իրավագիտությունը դիտում է որպես պետական կազմավորման յուրահատուկ ձև, ապա այդ դեպքում ասպարեզ կարող է իջնել մշակութային ինքնավարության տարբերակը՝ որպես հայերի հոգևոր, կրթական և մշակութային կյանքի կազմակերպման մոդել, ազգային արժեքների, սովորույթների և կենցաղի յուրահատկությունների, ազգային ինքնության պահպանումը ու զարգացումն ապահովող համակարգ:

Այս տարբերակը քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ բոլոր քրդերը մինչև վերջին մարդը չէ, որ կլքեն նոր պայմաններում հայտնված Արևմտյան Հայաստանը: Որոշ քանակի քրդեր կմնան այնտեղ և նրանց իրավունքները պետք է երաշխավորվեն ու պահպանվեն՝ առաջին հերթին ազգային-մշակութային և հոգևոր-կրոնական հարցերում: Կարծում ենք, որ դա հնարավոր է ապահովել Արևմտյան Հայաստանում Մշակութային ինքնավարություն հաստատելու պարագայում:

Տարբերակ Չորրորդ. Ֆինանսական-նյութական փոխհատուցում.

Միջանկյալ տարբերակ

Եթե թուրքական կողմը պատրաստ չլինի թույլատրել 1915թ. բռնահանված հայերին վերադառնալու իրենց բնօրրանը և մերժի նրանց տրամադրել ինչպես տարածքային, այնպես էլ մշակութային ինքնավարություն, ապա այդ պարագայում հայկական կողմը՝ Հայաստանի Հանրապետությունը, Արցախը և Սփյուռքը թուրքական կողմին պետք է ներկայացնի մեկուկես միլիոն սպանված և մոտ մեկ միլիոն բռնի արտաքսված հայերի ժառանգներին ֆինանսական և նյութական համարժեք փոխհատուցում տալու պահանջ, որը պետք է կազմի Հայկական հայեցակարգի օրգանական մասը:

Դրա համար կպահանջվի խստագույն, մանրակրկիտ և հավաստի հաշվարկ, որի համար պետք է ներգրավել նաև օտարերկրյա հեղինակավոր մասնագետների ու կազմակերպու-

թյունների: Այդ գործառույթը պետք է կատարվի միջազգային համապատասխան կազմակերպությունների վերահսկողության ներքո և հաստատվի նրանց կողմից:

Իդեալական Տարբերակ՝ Արևմտյան Հայաստանի անկախության կամ

Հայաստանի Հանրապետությանը միավորվելու տարբերակ

Մինչև այժմ ներկայացված տարբերակների ենթադրում են Արևմտյան Հայաստանի հիմնախնդրի կարգավորումը թուրքական պետության շրջանակներում, ինչը հասկանալի է, չի կարող լիովին բավարարել հայությանը, թեև հայության հնարավոր վերադարձը Արևմտյան Հայաստան կարելի է համարել պատմական նշանակություն ունեցող իրադարձություն: Մյուս կողմից, վերոնշյալ բոլոր չորս տարբերակներն էլ պետք է դիտել ոչ թե հարցի վերջնական, այլ միայն ու միայն հանգրվանային լուծում: Հիմնախնդրի վերջնական կարգավորումը, որը մենք անվանում ենք **իդեալական**, կարող է լինել կա՛մ **Արևտյան Հայաստանի անկախացումը և Հայաստանի Հանրապետությունից ու Արցախից հետո որպես հայկական երրորդ պետություն աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվելը,** կա՛մ **նրա միավորումը Հայաստանի Հանրապետության հետ**, որը Հայկական Սփյուռքի հետ ձեռք-ձեռքի տված կկազմակերպի հայության ներգաղթը Արևմտյան Հայաստան և կապահովի նրա վերահայացումը:

Առաջին հայացքից այս տարբերակը կարող է համարվել ցնորամտություն, սակայն, այդուհանդերձ ոչ անհնար: Պատմությունն ավելի անհավատալի թվացող երևույթների ու իրադարձությունների հեղինակը և միաժամանակ վկան է: Նա շարունակում է իր բնական հունով ընթանալ և մարդկությանը նորանոր ու ավելի անհնար թվացող անակնկալներ մատուցել: Ուրեմն պետք է զինվել համբերությամբ և սպասել պատմական այդ բախտորոշ պահին:

Ի՞նչ նկատի ունենք անակնկալ ասելով:

Իմ մասնագիտության բերումով ես եղել եմ բազմաթիվ միջազգային հեղինակավոր գիտաժողովների, կոնգրեսների, ֆորումների և նման այլ գիտական քննարկումների մասնակից, հանդիպել և զրույցներ ունեցել ականավոր գիտնական-մասնագետների հետ, ովքեր շատ հաճախ եղել են իրենց կառավարությունների խորհրդատուներ: Քննարկումների մի մասը փակ բնույթի է եղել, որի ընթացքում մտքերի անկաշկանդ փոխանակություններ են տեղի ունեցել այնպիսի հարցերի շուրջը, որոնք սովորաբար գիտաժողովների ամբիոններից բացահայտ չեն հնչում: Նման մի կարևոր և շատ նեղ կազմով փակ բնույթի քննարկում տեղի ունեցավ 2000թ. Մոնրեալում, Կանադա, գումարված արևելագետների XXXVI միջազգային կոնգրեսի (ICANAS) շրջանակներում, որի մասնակիցն է եղել տողերիս հեղինակը՝ որպես ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն:[66] Այդտեղ գլոբալացման, ճգնաժամերի և այլ խնդիրների հետ միասին քննարկման առարկա դարձավ որոշ պետությունների տրոհման հարցը: Այդ վերջին հարցի քննարկման նախաձեռնողները եղան ԱՄՆ-ի և Ավստրալիայի ներկայացուցիչները: Նրանք, վկայակոչելով ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզության վարչության (ԿՀՎ) կանխագուշակումները, նշեցին, որ աշխարհում կան մեկ տասնյակից ավելի բազմազգ պետություններ, որոնք ենթակա են տրոհման: Դրա հիմքում, ինչպես նշեցին նրանք, ըստ ԿՀՎ-ի ենթադրությունների, ընկած են ազգային-էթնիկական, երբեմն նաև կրոնական-կոնֆեսիոնալ հակասությունները, որոնք անխուսափելիորեն հանգեցնելու են նման տիպի պետությունների քայքայմանը և տրոհմանը: Եվ որպես օրնակ նշվեցին Չինաստանը, Ռուսաստանը, Ինդոնեզիան, Իրաքը, Իրանը, Թուրքիան և մի շարք այլ երկրներ: Նրանց հաղորդման համաձայն, ԿՀՎ-ի ցուցակում տրոհման ենթակա առաջին պետությունը Ինդոնեզիան էր: Եվ, իրոք, առաջինն Ինդոնեզիայից անջատվեց և իր անկախությունը հռչակեց Արևելյան Թիմորը, որը ստացավ միջազգային ճանաչում և դարձավ

66. XXXVIe CONGRES international des etudes asiatiques et nord-africaines. Palais des Congres . Montreal, Canada, 2000.

ՄԱԿ-ի անդամ: Դա վկայում է վերոնշյալ տեղեկատվության հավաստիության և իրատեսության մասին:

Պատմաբան-քաղաքագետները չեն բացառում Թուրքիայի տրոհումը քաղաքական, ռազմական և սոցիալական կատակլիզմների, ազգային-էթնիկական լարվածության արդյունքում: Հանրահայտ է այն բացառիկ լարվածությունը, որ տիրում է Թուրքիայում ազգային-էթնիկական և կրոնական հողի վրա: Ազգային փոքրամասնությունների՝ հույների, հայերի, ասորիների իրավունքները չեն հարգվում և բռնի ուժով նրանց հետ հաշվեհարդար տեսնելը, հետապնդումները, բացահայտ և թաքնված հալածանքները սովորական առօրյա երևույթներ են ժամանակակից Թուրքիայում, որը դարձել է այդ երկրի ներքին անկայունության մշտական գործոն: Սակայն ամենավտանգավորը քրդերի բացահայտ պայքարի մեջ մտնելն է թուրքական իշխանությունների հետ, որը սովորաբար ընդունում է զինված պայքարի բնույթ: Թեկուզ և անլեգալ ձևով շարունակում է գործել Քրդական բանվորական կուսակցությունը, որը, չնայած նրա ղեկավար Օջալանի նենգ ձերբակալությանը, զենքը վայր չի դրել և շարունակում է պայքարը քրդերի իրավունքների համար: Քրդերի ճնշող մեծամասնությունը անկախ քրդական պետություն ստեղծելու կողմնակից է, իսկ մի մասն էլ քրդական ինքնավարության հաստատմանը Թուրքիայում, բայց այնպիսի լայն իրավունքներով, որն ընդհուպ մոտենում է անկախության կարգավիճակին: Փաստորեն քրդական գործոնն այսօր դարձել է թուրքական միասնական պետության տրոհման հիմնական գործոնը՝ ազգային և կրոնական փոքրամասնությունների դժգոհության համընդհանուր ֆոնի վրա: Իսկ եթե դրան ավելացնենք նաև Թուրքիայի իսլամացման բավականին արագընթաց գործընթացը և մուսուլման-քրիստոնյա լարվածության ուժեղացումը, ապա չի կարելի բացառել այդ հողի վրա Թուրքիայի՝ որպես պետության տրոհումը:

Կանադայում տեղի ունեցած այդ փակ խորհրդակցությունից անցել է մոտ 15 տարի: Սակայն Թուրքիայի և մի շարք

այլ պետությունների տրոհման հարցը մոռացության չի տրվել և շարունակում է մնալ մասնագետների ուշադրության կենտրոնում: Դրա ապացույցն է հանդիսանում Ռեգնում (REGNUM) տեղեկատվական գործակալության 2011թ. հունվարի 21-ի հաղորդումն առ այն, որ ամերիկյան մասնագետները՝ Կանզասի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Սեմ Բելն իր նյույորքյան գործընկերների՝ Ամանդա Մերդինի և Բինգհամթոնի պրոֆեսոր Դեյվիդ Քինգրանելի հետ մշակել են մի նոր մոդել, որը հավաստիության շատ բարձր աստիճանով հնարավորություն է տալիս նախագուշակել Ամերիկայի, Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի տարբեր երկրներում հնարավոր քաղաքական խռովությունները և միջէթնիկական բախումները: Փորձագետները հաստատում են, որ կանխագուշակման նոր մոդելը կարող է կանխատեսել, թե առաջիկա հինգ տարում որ երկրում կարող են տեղի ունենալ քաղաքական խռովություններ և միջէթնիկական բախումներ: Մոդելը մշակվել է Open Innovation ընկերության պատվերով:[67] Ի հաստատումն այդ թեզի, նշվում է, որ քաղաքագետները կանխագուշակել էին իրադարձությունները Թունիսում, որն արդեն տեղի է ունեցել, որի արդյունքում 2011թ. հունվարին Թունիսի պրեզիդենտը փախավ և արաբական այդ երկրում տեղի ունեցավ իշխանափոխություն: Եվ դա հանդիսացավ համաարաբական ըմբոստության սկիզբը, որն իր մեջ ներառավ Եգիպտոսը, Սիրիան, Եմենը, Լիբիան, Ալժիրը, Բահրեյնը և այս կամ այն չափով նաև արաբական մյուս երկրները: Նոր մոդելի հեղինակներից Մերդինը նշում է. «Հետաքրքրական է, որ մեր մոդելը կանխագուշակում է քաղաքական բախումներ ոչ միայն այնպիսի պետություններում, ինչպես Հոնդուրասը և Իրանը, բայց և արևմտյան քաղաքակրթություններում: Օրինակ, մեր մոդելի համաձայն քաղաքացիական խռովություն էր սպասվում Իռլանդիայում, որը և տեղի ունեցավ Միջազգային Արժութային Հիմ-

67. http:// regnum.ru/news/fd-abroad/armenia/1366492.html

նադրամի վարկերի պատճառով»:[68] Մոդելը կանխագուշակել էր նաև Սուդանի տրոհումը, որը նույնպես արդեն կարելի է համարել կատարված: Այդ մոդելի համար օգտագործվում են աշխարհի 150 երկրների տեղեկատվական աղբյուրները:

Ըստ այդ մոդելի կազմվել է այն երկրների ցուցակը, որտեղ սպասվում են քաղաքացիական խռովություններ կամ միջէթնիկական բախումներ, կամ թե՛ մեկը և թե՛ մյուսը, և նրանց տրոհումը: Ցուցակում ընդգրկված են Կենտրոնական և Հարավային Ամերիկայի, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի, Ասիայի և Ավստրալիայի 37 պետություններ, այդ թվում (ըստ մոդելի հեղինակների համարակալման) 1.Իրան, 3.Ռուսաստան, 4.Վրաստան, 5.Իսրայել, 6.Թուրքիա, 11.Չինաստան, 14.Ուկրաինա, 15.Ինդոնեզիա, 27.Բելառուս, 31.Սուդան և այլն:[69] Մեզ մնում է ավելացնել, որ այն բոլոր երկրները, որոնք նշված էին ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության ցուցակում, իրենց տեղն են գտել նաև ամերիկյան քաղաքագետ-մասնագետների մշակած քաղաքացիական խռովությունների և միջէթնիկական բախումների վերաբերյալ Նոր մոդելի հեղինակների կազմած ցուցակում:Եվ պետք է նշել, որ Նոր մոդելի մի շարք կանխագուշակումներ արդեն իրականացվել են: Նկատի ունենք Վրաստանը, Ուկրաինան, Ինդոնեզիան, Սուդանը և այլն:

Հայկական հայեցակարգն այս բոլոր հանգամանքները մշտապես պետք է նկատի ունենա, իսկ Հայաստանի իշխանությունները պետք է արթուն լինեն և ակնդետ հետևեն դեպքերի զարգացմանը, ելակետ ունենալով նաև Թուրքիայի տրոհման հավանականությունը, որի վերաբեյալ իրենց համոզվածությունն են հայտնել այնպիսի երկու հեղինակավոր մարմիններ, ինչպես ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչությունը և ԱՄՆ-ի քաղաքագետների նոր հայտնագործությունը՝ Նոր մոդելի մշակումները:

68. Նույն տեղում:
69. Նույն տեղում:

Ահա այսպիսին են ընդհանուր գծերով քրդական գործոնի վերաբերյալ մեր կողմից առաջարկվող Հայկական հայեցակարգի սկզբունքային հիմնադրույթները, Արևմտյան Հայաստանի հիմնախնդրի կարգավորման տարբերակները և այդ հարցում Հայաստանի, Արցախի ու Հայ Սփյուռքի գործունեության հիմնական ուղենիշները:

Իրան-Թուրքիա-Ռուսաստան սահմանագծերը 1740 թ.ին: Հեղինակ՝ Օթենս: Այս եւ հետագա 4 քարտեզները՝ Ռուբեն Գալչյանի «Հայացք Հայաստանի պատմության» անգլերեն գրքից: Այս եւ մյուս բոլոր քարտեզներում Քրդստան տեղանունը նշվում է միայն Վանա լճի հարավ ընկած տարածքների վրա:

Հատված՝ Պարսկական կայսրության Նոր քարտեզից, գծված 1790 թ.ին դԱնվիլի կողմից:

Հատված՝ 1869 թ.ին Թեհրանում Քարաչեդաղի գծած քարտեզից: Ներքեւում, Վանա եւ Ուրմիո լճերից հարավ՝ արաբատառ՝ Քրդստան:



Ռուս-թուրքական սահմանագիծը 1878-ից մինչեւ 1-ին աշխարհամարտը: Հեղինակ՝ Ք. Զոնստոն:



Հայաստանի առաջին հանրապետության քարտեզը 1918-1920 թթ.ին:

Հատված՝ նախագահ Վուդրո Վիլսոնի քարտեզից, 1920 թ.:

Նախագահ Վուդրո Վիլսոն

Ավետիս Ահարոնյան, Սեւրի պայմանագիրն ստորագրած ՀՀ պատվիրակության նախագահ:

Սեւրի պայմանագիրն ստորագրած Օսմանյան կառավարության ներկայացուցիչներից երկուսը՝ ձախից աջ՝ Ռիզա Թեվֆիկ եւ Դամադ Ֆերիդ փաշա:



Ցեղասպանության եւ բռնագաղթի վերակառուցված կենտրոնները: Քարտեզագիր՝ Գրիգոր Հակոբյան, 2014 թ.:



Հեղինակի մասին

Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանը ծնվել է 1930 թվականին Լենինականում: 1953 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, իսկ 1956 թվականին՝ ասպիրանտուրան: Պատմաբան արևելագետ-արաբագետ և միջազգայնագետ է: Պատմական գիտությունների դոկտոր (1968թ.), պրոֆեսոր (1971թ.), Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ (2006թ.), Գիտության վաստակավոր գործիչ: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և արդի հայ արևելագիտության հիմնադիրներից, հիմնասյուներից ու ղեկավարներից մեկն է: 1995-2006թթ. եղել է Արևելագիտության ինստիտուտի տնօրենը: Այդ ծանր տարիներին և գիտության համար ոչ նպաստավոր ժամանակաշրջանում դոկտոր Հովհաննիսյանին հաջողվեց ոչ միայն պահպանել հայ արևելագետների գենոֆոնդը, այլև համալրել երիտասարդ և խոստումնալից կադրերով: Արևելագիտության ինստիտուտը դարձավ կարևոր գիտական կենտրոններից մեկը՝ իրականացնելով ստրատեգիական բնույթի առաքելություն: Նիկոլայ Հովհաննիսյանը հայկական արաբագիտական դպրոցի հիմնադիրն ու ճանաչված լիդերն է և ավելի քան քառասուն տարի (1962-2003թթ.), գլխավորել է իր իսկ հիմնած Արաբական երկրների բաժինը: Նա մեծ դեր է խաղացել Արևելագիտության ինստիտուտի Արևելյան Ասիայի երկրների, Մերձավոր ու Միջին Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրությունների բաժինների ստեղծման և կազմակերպման գործում: Մեծ է նրա ներդրումը նաև Կահիրեի համալսարանի Հայկական հետազոտությունների կենտրոնի կազմակերպման բնագավառում:

Պրոֆեսոր Ն.Հովհաննիսյանը 2006 թվականից ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենի, իսկ 2007 թվականից նաև ՀՀ Պաշտպանության նախարարության Դ.Կանայանի անվան Ազգային Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդական է:

Մեծ և ծանրակշիռ է դոկտոր Ն.Հովհաննիսյանի գիտական վաստակը: Տասնամյակներ շարունակ հայ ականավոր գիտնականարևելագետի և միջազգայնագետի գիտական ուսումնասիրությունների կենտրոնում են եղել արաբական երկրների պատմության, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների, իսլամի, պատմական տարբեր դարաշրջաններում հայ-արաբական, այդ թվում և միջպետական հարաբերությունների արդիական հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Նա առաջիններից մեկն էր, որ ձեռնամուխ եղավ արաբական երկրների ազգային ազատագրական շարժումների ուսումնասիրությանը և ընթերցողի սեղանին դրեց այնպիսի արժեքավոր մենագրական ուսումնասիրություններ, ինչպես «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում» (1963թ. Երևան, հայերեն, 1974թ., Բեյրութ արաբերեն), «Սիրիական անկախ Հանրապետության ստեղծումը» (1968թ., Մոսկվա, ռուսերեն,), «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում» (Երևան, 1976թ. ռուսերեն), «Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիքորոշումը (1975-1982)» և այլն: Առանձնահատուկ նշանակություն ունի նրա «Արաբական երկրների պատմությունը (VIIդ. -2005թթ)» քառահատոր, իր բնույթով եզակի, հայերեն (Երևան, 2003-2007թթ.) և արաբերեն (Հալեբ, 2011թ.) լեզուներով հրատարակված կոթողային աշխատությունը, որն արժանացել է Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին:

Նրա ուսումնասիրություններում արժանի տեղ է գրավում էթնոքաղաքական բախումների, այդ թվում և Ղարաբաղյան հիմնախնդիրների լուսաբանությունը,, ինչպես «Ղարաբաղյան հիմնախնդիրը. Անկախության և ազատության փշե ճանապարհը» (Երևան և Վենետիկ՝ անգլերեն, Հռոմ՝ իտալերեն), ԱՄՆ-ում՝ Մերիլենդի համալսարանում

հրատարակված «Էթնոքաղաքական առճակատումներն Անդրկովկասում: Նրանց արմատները և լուծումները» և այլն:

Դոկտոր Ն. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում է մշտապես եղել Հայոց ցեղասպանության հայեցակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որին նվիրված է նրա հետազոտությունների մի ամբողջ շարքը: Այդ առումով բացառիկ նշանակություն ունի նրա «Հայոց ցեղասպանություն. Հայասպանությունը որպես ամենագենոցիդային գենոցիդ. Աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն, հունգարերեն, ճապոներեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն» բազմապլանային հետազոտությունը, որին պետք է ավելացնել նաև կորեերեն և ռումիներեն լեզուներով հրատարակությունները՝ հանապատասխանաբար Հարավային Կորեայում և Ռումինիայում: Դա հիմնարար, իր նախադեպը չունեցող ուսումնասիրություն է, որն արժանացել է ՀՀ Մշակույթի նախարարության Առաջին կարգի դիպլոմի: Իր կարևորությամբ մեծ արժեք է ներկայացնում նաև նրա «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է» ինքնատիպ ուսումնասիրությունը: Նա հատուկ անդրադարձել է Աբդուլ Համիդ II-ի հակահայկական քաղաքականության լուսաբանությանը, 1915թ. հայկական Մեծ եղեռնի պատճառներին, արաբ ժողովրդի, նրա հոգևոր և քաղաքական առաջնորդների հայանպաստ դիրքորոշմանը, տարագիր հայերին ցուցաբերած արաբների մարդասիրական վերաբերմունքին և օգնությանը: Նա առաջին հեղինակն է, որ ուսումնասիրության առարկա է դարձրել Հայոց ցեղասպանության հարցի լուսաբանությունը ժամանակակից արաբական պատմագրության մեջ, որին նվիրված մենագրությունը բացի հայերենից լույս է տեսել նաև անգլերեն, պարսկերեն և արաբերեն լեզուներով: Նրա ջանքերի շնորհիվ միջազգային լայն տարածում է ստացել «Արմենոցիդ» եզրը՝ որպես «Հայասպանության» հոմանիշ (տես նրա «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է», Երևան, 2010, 263 էջ):

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի աշխարհի տարբեր երկրներում և տարբեր լեզուներով հրատարակված աշխատությունների թիվն անցնում է 570-ից, այդ թվում 85՝ մենագրական ուսումնասիրություն: Դրանք նրան բերել են միջազգային մեծ ճանաչում:

Նա արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ է, այդ թվում՝ Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի, Մոսկվայի Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի, Գերմանիայի Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի, Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի (Մոսկվա), Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության, ԱՄՆ-ի Ազգային աշխարհագրական ընկերության, Ցեղասպանագիտության միջազգային ասոցիացիայի և այլն: Բրիտանական ակադեմիայի հրավերով նա 1989թ. գիտական ուսումնասիրություններ է իրականացրել Լոնդոնի, Օքսֆորդի և Էդինբուրգի համալսարաններում: Շահելով Ֆուլբրայթի մրցանակ, նա 1993-1994թ. գիտահետազոտական աշխատանքներ է տարել ԱՄՆ-ի Ջորջ Վաշինգտոնի էլիտար համալսարանում, իսկ 1995թ.՝ Մերիլենդի համալսարանում, հետագայում նաև Լիբանանի, Սիրիայի, Իրաքի և Եգիպտոսի գիտական կենտրոններում:

Նրա գիտական ղեկավարությամբ մոտ 50 պատմաբաններ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, այդ թվում Սիրիայից, Լիբանանից, Հորդանանից, Եգիպտոսից, Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից և այլ երկրներից: Նա պատրաստել է արաբագետների մի ամբողջ սերունդ:

Կառավարական պաշտոնական պատվիրակությունների կազմում այցելել է Սիրիա, Լիբանան, Իրաք, Հորդանան, Լիբիա, Հնդկաստան, Չինաստան և այլ երկրներ, մասնակցել Իրաքի պրեզիդենտ Ահմադ Հասան ալ-Բաքրի, Սիրիայի պրեզիդենտ Հաֆիզ Ասադի, Լիբանանի պրեզիդենտ Սուլեյման Ֆրանժիեի և վարչապետ Ռաշիդ Սոլհի, Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարար և Հեղափոխական խորհրդի նախագահ, այաթոլլահ Խոմեյնիի հատուկ ներկայացուցիչ Մուստաֆա Չամրանի, Հնդկաստանի և Չինաստանի բարձրաստիճան պետական այրերի հետ բանակցություններին: Ն.Հովհաննիսյանը կատարել է հասարակական մեծ ծավալի աշխատանքներ՝ եղել է Սովետա-արաբական բարեկամության Ասոցիացիայի փոխ պրեզիդենտ, Ասիայի և Աֆրիկայի

Համերաշխության Խորհրդային կոմիտեի և նրա վարչության անդամ, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ, «ԽՍՀՄ-Իրաք» բարեկամության ընկերության փոխպրեզիդենտ, «ԽՍՀՄ-Լիբանան», «ԽՍՀՄ-ԵԺԴՀ» բարեկամության ընկերությունների վարչությունների անդամ և այլն: Նա Կոնֆլիկտների լուծման Հայկական կենտրոնի հիմնադիր տնօրենն է, Հայ Ատլանտյան ասոցիացիայի նախագահ, Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի խորհրդի անդամ:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում և ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում գործող ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի մասնագիտական խորհուրդների անդամ է:

Պարգևատրված է «Մովսես Խորենացի», ՀՀ Պաշտպանության նախարարության «Սպարապետ Վազգեն Սարգսյան», «Հայկական զինված ուժեր. 1992-2012» և «Դրաստամատ Կանայան» մեդալներով, «Բարեկամության բնագավառում ներդրման համար» (Մոսկվա) մեդալով, ՀՀ Կառավարության «Հայոց Մեծ Եղեռն» ոսկեզօծ մեդալով, «Ֆրիտյոֆ Նանսեն» հուշամեդալով, ԼՂՀ-ի «Ղարաբաղյան Շարժում» և «Երախտագիտություն» մեդալներով, «Հայաստան-Եգիպտոս. Դիվանագիտական հարաբերությունների 15 տարի. Բարեկամություն և համագործակցություն» մեդալով, ՀՀ ԳԱԱ Գովեստագրով, ՀՀ Ազգային Ժողովի նախագահի Շնորհակալագրով և այլն:

Օրերս, Հայոց բանակի ստեղծման 24-րդ տարեդարձի առիթով, պրոֆ. Ն. Հովհաննիսյանն արժանացավ ՀՀ Նախագահի «Հայրենիքի ծառայության համար» 2-րդ կարգի մեդալին:

Քեմբրիջի (Անգլիա) Միջազգային կենսագրական կենտրոնը հայ մեծանուն գիտնականին 2004թ. հռչակել է «Աշխարհի առաջատար գիտնական», 2005-ին՝ ճանաչել «XXI դարի ականավոր գիտնական», իսկ 2009թ.՝ ներառել «100 ամենաբարձրակարգ (top) գիտնականների» ցանկում:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Խմբագիր՝ **Հակոբ Ավետիքյան**
Էջադրող՝ **Կարինե Արզումանյան**
Համակարգչային սրբագրումը՝ **Անի Գրիգորյանի**

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում